

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

2004 թվականին Դատարանը կայացրել է 718 վճիռⁱ, որից 15-ը կայացրել է Մեծ Պալատը: 2004 թվականին կայացված վճիռների թիվը փոքր ինչ աճել է նախորդ տարվա համեմատությամբ (703): 2001 թվականից հետո սա տարեկան կտրվածքով առաջին աճն է: Ավելին, կայացված վճիռների էության ուսումնասիրությունը վկայում է առավել բարդ վճիռների թվի նշանակալից աճի մասին: Այսպես, եթե 2003 թվականին Դատարանի վճիռների բազայում կարևորության 1-ին կամ 2-րդ աստիճանի տակ դասակարգված գործերի թիվը 185 էր, ապա 2004 թվականին այն կազմում էր 244՝ մոտավորապես 1/3-ով ավելի: Հետևաբար, բացի թվի աճից, էականորեն բարձրացել է նաև Դատարանի վճիռների ազդեցության արդյունավետությունը:

Վճիռների ավելի քան 50 տոկոսը կայացվել են չորս պետությունների՝ Թուրքիայի, Լեհաստանի, Ֆրանսիայի և Իտալիայի նկատմամբⁱⁱ: Վճիռներ կայացվել են նաև այլ Պայմանավորվող պետությունների նկատմամբ, բացառությամբ Հայաստանի, Ադրբեյջանի, Բոսնիայի և Հերցեգովինայի, Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության, Նորվեգիայի, Սլովենիայի և Շվեյցարիայի: Դատարանը 2004 թվականին իր առաջին վճիռները կայացրեց Ալբանիայի և Վրաստանի նկատմամբ: Դատարան ներկայացվող գանգատների թիվը շարունակում է անընդհատ աճել՝ հասնելով մոտավորապես 44,128-ի (նախորդ տարում ներկայացված թվով 38,810 գանգատների համեմատությամբ աճը կազմել է 13,7 տոկոս), իսկ ընդունելի հայտարարված գանգատների թիվը 753-ից հասել է 841-ի (աճը կազմել 11,75 տոկոս):

Ինչպես և նախորդ տարիներին, Դատարանի վճիռների մի զգալի մասը բացառապես կամ գլխավորապես վերաբերում է դատական վարույթների անողջամիտ երկարատևությանը: Այս վճիռների թիվը քիչ է տարբերվում նախորդ տարվա թվից (235-ից հասել է 248-ի) ինչպես որ բոլոր վճիռների տոկոսներն աճել են՝ 33,43 տոկոսից հասնելով 34,49 տոկոսի:

Բացի դրանից, վերը նշված երկու երկրների՝ Լեհաստանի և Ֆրանսիայի նկատմամբ են կայացվել այս վճիռների մի զգալի մասը (համապատասխանաբար 67 և 63): Չնայած հաջորդ տարվա ընթացքում միայն մի քանի գործեր եղան, որոնք վերաբերվում էին Իտալիայում դատական վարույթների տևողությանը՝ որպես ներպետական մակարդակումⁱⁱⁱ փոխհատուցման տրամադրման մեխանիզմների ներդրման ուղղակի հետևանք, նման գանգատների մի նոր ակիք սկսվեց 2003 թվականի մարտին *Սկորդինոյի (Scordino)*^{iv} գործով Դատարանի կայացրած վճիռից հետո, որով Դատարանը գտավ, որ ներպետական դատարանների շնորհած փոխհատուցման չափը բավարար չափով բարձր չէ դիմումատուներին զոհի կարգավիճակից հանելու համար: Այդ կապակցությամբ 2004 թվականի նոյեմբերին կայացված մի խումբ վճիռներում, Դատարանը սահմանեց արդարացի փոխհատուցման հաշվարկման մի շարք չափանիշներ^v, որոնք Իտալիայի դատարաններին փոխհատուցման բավարար չափը որոշելիս իրենց մոտեցումը Դատարանի մոտեցմանը համապատասխանեցնելու

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

հնարավորություն կտային: Ինչևէ, այս գործերը Մեծ Պալատ հանձնելու մասին Կառավարության խնդրանքները բավարարվել են:

Ինչ վերաբերում է 2004 թվականի վճիռների այլ կարևոր խմբերին, ապա հիմնական աճը վերաբերում է Թուրքիայի Ազգային անվտանգության դատարանների անկախության ու անաչառության մասին գործերին, ներառյալ նրանք, որոնցում վիճարկվող հաջորդ հարցը արտահայտվելու ազատությունն էր^{vi}: Այնուամենայնիվ, այս կապակցությամբ պետք է նշել, որ Ազգային անվտանգության դատարաններում գինվորական դատավորների մասնակցությունը դադարեցվեց 1999 թվականի հունիսին^{vii}, իսկ ազգային անվտանգության դատարանները լուծարվեցին 2004 թվականին^{viii}:

Այլ էական աճեր գրանցվել է նաև Թուրքիայում^{ix} էքսպրոպրիացիների վճարման ուշացումների և Խորվաթիայում^x քաղաքացիական վարույթների տևողության վերաբերյալ գործերով: Մյուս կողմից Իտալիայում վարձակալների հարկադիր վտարման խնդիրներին վերաբերող գործերի թիվը 123-ից նվազել է 18-ի, իսկ Ռումինիայում^{xi} վերջնական և պարտադիր կատարման ենթակա վճիռները վերացնելուն վերաբերվող գործերը քիչ թե շատ պակասել են:

2004 թվականի ընթացքում տեղ գտած առավել հիշարժան զարգացումներից մեկը Դատարանի գնալով աճող հակումն էր մատնանշել պատասխանող պետության կառավարություններին այն միջոցները, որոնք անհրաժեշտ կլինեին ձեռք առնել խախտման գոհին արդարացի փոխհատուցում տրամադրելու համար: Դատարանը նման գնահատականներ է տվել նաև նախկինում, օրինակ «անուղղակի բռնագրավման» միջոցով սեփականությունից անօրինական կերպով զրկելուն վերաբերվող մի գործում Դատարանը գտավ, որ «փոխհատուցման առավել ընդունելի տարբերակը ... Պետության կողմից հողամասի վերադարձումն է կրած նյութական վնասների հետ միասին, ինչպես օրինակ հողամասից օգտվելու անհնարինությունը, և հատուցումը ոչ նյութական վնասնի համար»^{xii}: Մինչդեռ նախկինում ազգայնացված սեփականությունը հետ վերադարձնելու մասին դատարանի վերջնական որոշումների վերացմանը վերաբերող մի շարք այլ գործերում Դատարանը նշեց, որ «վիճարկվող սեփականության վերադարձը ... դիմումատուին հնարավորինս կբերեր այն վիճակին, որում նա կլինեի, եթե խախտումը առկա չլիներ»^{xiii}: *Բրումչեսկուի* (Brumărescu) գործով իր վճռում, Դատարանը վճռի եզրափակիչ մասում նույնիսկ նշեց, որ Պետությունը «պետք է վերադարձնի դիմումատուին ... վիճարկվող տունը և ինչպես նաև հողամասը, որի վրա այն գտնվում [է]» բայց փոխհատուցման որոշակի չափի վճարման այլընտրանքով, եթե ռեստիտուցիան տեղի չունենա: Դատարանը Թուրքիայի Ազգային անվտանգության դատարանների անաչառությանն ու անկախությանը վերաբերող իր բազմաթիվ վճիռներում գտել է, որ «սկզբունքորեն, հատուցման առավել ընդունելի եղանակը դիմումատուի նկատմամբ անկախ ու անաչառ դատարանի կողմից վարույթ իրականացնելու հնարավորության ապահովումն է^{xiv}»: Այդ վճիռներում Դատարանը գտել է, որ դիմումատուն պատասխանատվության էր ենթարկվել մի դատարանի

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

կողմից, որը ազատ ու անաչառ չի եղել: 2004 թվականին կայացրած իր երկու վճիռներում, որոնք վերաբերում էին Իտալիայում մարդկանց *in absentia* դատապարտմանը, Դատարանը նմանապես նշեց, որ առավել համապատասխան հատուցումը արագ և 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող վարույթների վերաբացումը կլիներ^{xv}:

Ասսանիձեն ընդդեմ Վրաստանի (Assanidze v. Georgia) գործով^{xvi}, Մեծ Պալատն ավելի զարգացրեց իր այս տեսակետը: Եզրակացնելով որ առկա է Կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածների խախտում այն հիմքով, որ Աջարիայի Ինքնավար Հանրապետության իշխանությունները դիմումատուին ազատ չէր արձակել, չնայած Վրաստանի Գերագույն դատարանը բեկանել էր մեղադրական դատավճիռն ու կայացրել արդարացման դատավճիռ, Դատարանն իր վճռի եզրափակիչ մասում նշեց, որ «Պատասխանող կառավարությունը պետք է ապահովի դիմումատուի ազատ արձակումը հնարավորինս սեղմ ժամկետներում»: Վերահաստատելով, որ պետությունն է որոշում դատարանի վճռի կատարման իր պարտականության իրականացման եղանակները, Դատարանը միաժամանակ արտահայտեց այն մոտեցումը, որ «սույն գործով հայտնաբերված խախտումն իր բնույթով, չի թողնում իրական ընտրություն կատարել հատուցման միջոցների միջև»:

Հետագա լուրջ զարգացումներ տեղի ունեցան *Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի (Broniowski v. Poland)* գործով Մեծ Պալատի վճիռի կայացմամբ^{xvii}: Գանգատը վերաբերում էր «Բուզ գետից անդին ընկած տարածքների», որոնք Երկրորդ Համաշխարհային Պատերազմից հետո դադարել էին Լեհաստանի տարածքը լինելուց, սեփականության իրավունքը գեղջ գներով ձեռք բերելու ձևով փոխհատուցման տրամադրմանն ուղղված Լեհաստանի իշխանությունների հաջորդական գործողություններին: 1990 թվականի Տեղական ինքնակառավարման մասին ակտի հիման վրա պետական սեփականությունը հանդիսացող հողերը տեղական ինքնակառավարման մարմիններին փոխանցելու, ինչպես նաև 1993-ից 2001 թվականներին օրենսդրական փոփոխությունների միջոցով փոխհատուցման համար նախատեսված սեփականության կրճատման հետևանքով Պետության համար գործնականում անհնար դարձավ կատարել այդ խնդիրը, և Սահմանադրական դատարանը 2002 թվականին վճռեց, որ հազարավոր մարդկանց «վարկի իրավունքը» դարձել է վերացական: Եվրոպական դատարանը ոչ միայն Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում արձանագրեց, այլ նաև եզրակացրեց որ «խախտումը ծագել էր «Բուզ գետի պահաջատերերի «վարկի իրավունքի» իրականացման արդյունավետ մեխանիզմների բացակայությամբ պայմանավորված ներպետական օրենսդրության և պրակտիկայի անարդյունավետության հետևանքով»: Դատարանը անընդհատ ծագող հիմնախնդիր է արձանագրել այն հարցերի կապակցությամբ, «երբ գործի փաստերը [ներպետական] իրավական համակարգի բացթողումներ են արձանագրում, որի հետևանքով քաղաքացիների մի ամբողջ խումբ կամ զրկված են եղել կամ էլ ներկայումս են զրկված [Կոնվենցիայով երաշխավորված իրենց իրավունքներից]», ինչպես

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

նաև «երբ ներպետական օրենքներում և պրակտիկայում արձանագրված բացթողումները ... կարող են բերել լավ հիմնավորված գանգատներ ներկայացնելուն»:

Այս առումով Ղատարանը սահմանեց, որ վճիռները կատարելիս «ընդհանուր միջոցառումներ է պետք ձեռք առնել, որոնք կամ կվերացնեն այն մարդկանց իրավունքների իրականացմանը խոչընդոտող հանգամանքները, որոնց խախտումները առաջ են եկել մի իրավիճակից, որը [Ղատարանը] արձանագրել է որպես Կոնվենցիայի խախտում, կամ էլ փոխարենը հատուցում կնախատեսեն»: Իր վճիռի պատճառաբանական մասում Ղատարանը նշում է, որ «Պատասխանող մասնակից պետությունը՝ համապատասխան իրավական մեխանիզմներով և պրակտիկայով պետք է ապահովի, որ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված սեփականության իրավունքի պաշտպանության սկզբունքների համաձայն Բուզ գետի առնչությամբ ներկայացված մնացած հայցերով վիճարկվող սեփականության իրավունքը իրականանա և նրանց հատուցում տրամադրվի»: Այսպիսով, Ղատարանը նշանակալիորեն մեծացրեց իր դերը՝ համախառնապես անհատական միջոցներ սահմանելուց, օրինակ ինչպես վերը հիշատակված *Ասսանիժեի* գործում, անցնելով ընդհանուր միջոցներ սահմանելուն, որը պահանջում է լուծել պարբերական բնույթ ունեցող հարցեր:

«Պիլոտային» վճիռ ընդունելու այս մեթոդը, որտեղ ընդգծվում է պարբերաբար առաջացող մի պրոբլեմ, Ղատարանի աշխատանքի համար կարևոր գործնական նշանակություն ունի, և վերջինս նման պայմաններում միացնում է դատարանի վարույթում գտնվող և միևնույն խնդրից բխող գանգատների քննությունը: Մարդու իրավունքները ներպետական մակարդակում արդյունավետ պաշտպանելու միջոցով դատարանի ծանրաբեռնվածությունը նվազացնելու հիմնական նպատակին հասնելու առումով, մասնավորապես նմանատիպ գործերի մեծ թվի առկայության պայմաններում, Ղատարանը նշում է, որ «ընդունված միջոցները պետք է այնպիսին լինեն, որպեսզի վերացնեն [իր կողմից] խախտման արձանագրման հիմք հանդիսացած հարցերը՝ Ստրասբուրգյան մարմիններին նույն հիմքից ծագած գանգատների մեծ թվի քննությամբ չծանրաբեռնելու համար»: 2004 թվականի հոկտեմբերին Լեհաստանի դեմ բերված մեկ այլ գանգատի կապակցությամբ Ղատարանը կողմերին հայտնեց, որ 2004 թվականի հոկտեմբերին Լեհաստանի դեմ բերված մեկ այլ գործով Ղատարանը կողմերին տեղեկացրել է, որ ինքն այդ գործը համարել է «Պիլոտային» գործ այն առումով, որ այդ գործում սահմանակցում է թե արդյոք վարձով տրվող բնականարանների վարձավճարների նկատմամբ շարունակական հսկողության մեխանիզմը համապատասխանում է Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածին^{xviii}: Բացի դրանից, Ղատարանը Իտալիայում *in absentia* դատապարտման առնչությամբ գանգատի հիման վրա կայացրած իր վճիռներից մեկում գտավ, որ խախտումը հետևանք է համակարգային խնդրի և վճռեց, որ պետությունը պետք է ապահովի նման իրավիճակներում դիմումատուի և այլ անձանց իրավունքների պաշտպանությունը^{xix}:

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

Վերջապես, այս կապակցությամբ անհրաժեշտ է հիշատակել նաև *Ունալ Թեկելին ընդդեմ Թուրքիայի (Ünal Tekeli v. Turkey)*^{xx} գործով վճիռը, որտեղ դատարանը Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում արձանագրեց 8-րդ հոդվածի համակացությամբ, այն հիմքով, որ ներպետական դատարանները թույլ չէին տվել դիմումատուին ամուսնությունից հետո օգտագործել միայն իր օրիորդական ազգանունը: Արդարացի փոխհատուցման հարցի վերաբերյալ իր եզրակահանգման մեջ Դատարանը նշեց, որ «Թուրքիայի խնդիրն է սույն վճիռը հիմք ընդունելով կիրառել համապատասխան միջոցներ, որոնք ինքը պատշաճ կհամարի, մինչամուսնական ազգանունը պահպանելու, կամ ընդհանուր ազգանուն ընտրելու հարցում հավասար ձայն ունենալու յուրաքանչյուր ամուսնու իրավունքի իրականացումը երաշխավորելու իր պարտականությունը կատարելու համար»: Դատարանը նաև ավելացրեց. «Չնայած կասկած չկա, որ դիմումատուն նախկինում ստրես և վախ է ապրել, այնուամենայնիվ սույն գործով գանգատի հիմքում դրվել է օրիորդական ազգանունը պահպանելու հնարավորությունը Թուրքական օրենսդրությամբ բացառելու հանգամանքը: Հետևաբար, Դատարանը պատշաճ չհամարեց դիմումատուին հատուցում շնորհել, գտնելով, որ տվյալ գործի հանգամանքների ներքո, խախտման արձանագրումը, որն իր ազդեցությունը կունենա ապագայում, ինքնին արդարացի փոխհատուցում է»: Այնուամենայնիվ, այս նշումը չի կրկնվում վճռի եզրափակիչ մասում:

Ներպետական պրակտիկայի բացթողումները, որը Դատարանն որպես խնդիր արձանագրեց վերը հիշատակված *Բրոնիովսկու* գործով վճռում, որպես կարևոր հատկանիշ առանձնացվել է Դատարանի վերջերս կայացրած մի շարք վճիռներում: Այդ վճիռներում Դատարանն ընդգծում է, որ չնայած օրենսդրությունը իրավունքների արդյունավետ պաշտպանության պատշաճ մեխանիզմներ է սահմանում, պրակտիկայում որոշ ներպետական մարմիններ դիտավորյալ կամ առանց դիտավորության, պատշաճ կարգով չեն իրականացնում օրենքի և օրենսդրության պահանջները: Այսպես, *Օներիլդիզն ընդդեմ Թուրքիայի (Öneriyıldız v. Turkey)*^{xxi} գործում, որը վերաբերում է աղբանոցում տեղի ունեցած պայթյունի հետևանք հանդիսացած մահվան դեպքերին, դատախազը մեղադրանքը որակեց միայն որպես իրենց պարտավորությունների կատարման հարցում անփութության ցուցաբերում, չնայած որ ներպետական օրենսդրությունը սահմանում էր պատասխանատու պաշտոնյաներին պատասխանատվության ենթարկելու կարգ: Այդ իսկ պատճառով մահվան դեպքերի համար պատասխանատվության մասով քննություն տեղի չունեցավ և նրանց նկատմամբ ի վերջո նշանակվեցին շատ փոքր տուգանքներ: *Թա Ակին և այլոք ընդդեմ Թուրքիայի (Ta Akyın and Others v. Turkey)*^{xxii}, գործով ոսկու հանքը շահագործելու թույլտվությունը իշխանությունների կողմից վերահաստատվել էր առանց պատշաճ ընթացակարգի պահպանման՝ խախտելով դատարանի վճիռը: Նմանապես, *Մորենո Գոմեսն ընդդեմ Իսպանիայի (Moreno Gómez v. Spain)* գործում^{xxiii}, աղմուկի սահմանների գերազանցման լուրջ պրոբլեմներն ընդունելու

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

փոխարեն, իշխանությունները ոչ միայն հանդուրժում էին այդ իրավիճակը, այլ գործնականում շրջակայքում նոր պարային ակունքներ և բարեր բացելու թույլտվություններ էին տալիս: Վերջապես, դատարանը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում արձանագրեց *Պրոկոպովիչն ընդդեմ Ռուսաստանի (Prokopovich v. Russia) գործում*^{xxiv}, որտեղ մահացած վարձակալի զուգընկերը վտարվել էր առանց պատշաճ ընթացակարգի պահպանման:

Որոշ կարևոր վճիռներում, դատարանը քննության է առել Պետության իրավագործության հարցը: Վերն արդեն հիշատակված *Ասսանիձեի* գործով վճռում խնդիրը մասնավորապես կայանում էր նրանում, արդյոք Վրաստանը կարող է պատասխանատվություն կրել մի իրավիճակի համար, որն իրականում վերագրվում էր ինքնավար տարածքի իշխանություններին: Այդ իշխանությունները հրաժարվել էին կատարել Վրաստանի Գերագույն դատարանի դատավճիռը: Եվրոպական Դատարանը գտավ, որ Աջարիայի Ինքնավար Հանրապետությունը Վրաստանի տարածքային մաս է հանդիսանում և, հաշվի առնելով այն, որ չկան որևէ անջատողական շարժումներ և որ որևէ այլ պետություն վերահսկողություն չի իրականացնում Աջարիայի տարածքի նկատմամբ, առկա է կանխավարկած, որ Վրաստանը հանդիսանում է պատասխանատու: Այդ կանխավարկածը հաստատվեց և հետևաբար խնդրո առարկա գործողությունները ընկան Վրաստանի իրավագործության ներքո:

Իրավիճակն այլ է թվում *Իլասկուն և այլոքն ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի (Ila Aescu and Others v. Moldova and Russia)* գործով^{xxv}, որտեղ, Մեծ Պալատը կոչված էր որոշելու, արդյոք Ռուսաստանի թե Մոլդովայի «իրավագործությունն է» տարածվում անջատված «Տրանսնիստրիա Մոլդովական Հանրապետության» նկատմամբ, որտեղ 1991 թվականին Մոլդովայի անկախության հռչակումից հետո մնացել էին Ռուսական գորամիավորումները: Ինչ վերաբերում է Մոլդովային, Դատարանի սահմանած սկզբունքը կայանում է նրանում, որ վերը հիշատակված կանխավարկածը, թե «իրավագործությունն» իրականացվում է պետության տարածքով, կարող է սահմանափակվել բացառիկ դեպքերում, մասնավորապես, եթե պետությունը հնարավորություն չունի իր իշխանությունն իրականացնել իր տարածքի մի մասում, այն դեռևս շարունակում է կրել այդ տարածքում մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու ուղղված բավարար միջոցներ ձեռք առնելու դրական պարտավորությունը: Այսինքն, չնայած Մոլդովայի կառավարությունը, որը միջազգային իրավունքի տեսանկյունից միակ օրինական իշխանությունն էր հանդիսանում, իր տարածքի մի մասի վերաբերյալ վերահսկողություն չունեի, դեռևս ազատված չէր դիմումատուների իրավունքները պաշտպանելու՝ մասնավորապես նրանց կալանքից ազատ արձակելու, ուղղությամբ իր իրավասությունների շրջանակներում միջոցներ ձեռք առնելու դրական պարտավորությունից: Հետևաբար, պետության «իրավագործությունը» չի կարող համարվել դադարված: Այնուամենայնիվ, քանի որ իրավագործության շրջանակները սահմանափակված էին փաստացի գոյություն ունեցող իրավիճակով,

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով պետության պատասխանատվությունը պետք է դիտարկվեր միայն նրա դրական պարտավորությունների տեսանկյունից: Սա ենթադրում է պարտավորություն Տրանսլնեստրիայի նկատմամբ վերահսկողությունը վերահաստատելու և դիմումատուների անհատական իրավունքների նկատմամբ հարգանք ապահովելու առումով: Դատարանն ընդունեց, որ Մոլդովան քիչ բան կարող էր հակադրել Ռուսաստանի Դաշնության նման հզոր ուժի կողմից օժանդակություն ստացող ռեժիմին, նաև ընդունեց, որ դիվանագիտական մակարդակով դիմումատուներին ազատ արձակելու ուղղությամբ միջոցներ են ձեռք առնվել: Այնուամենայնիվ, Դատարանը գտավ, որ 2001 թվականի մայիսից հետո, երբ դիմումատուներից մեկն ազատ արձակվեց, այս ջանքերը սկսեցին թուլանալ, և եզրակացրեց, որ Մոլդովայի պատասխանատվությունը կարող է ծագել իր դրական պարտավորությունները չկատարելու հիմքով:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի Դաշնության իրավագործությանը, Դատարանը կրկին հաստատեց այն սկզբունքը, որ պետության գործողությունները, որոնք տեղի են ունենում կամ ազդեցություն են թողնում իր տարածքից դուրս, բացառիկ դեպքերում կարող են համարվել «իրավագործության» իրականացում: Ավելին, այնտեղ որտեղ պետությունը վերահսկողություն է իրականացնում իր տարածքից դուրս գտնվող շրջանի նկատմամբ, նրա պատասխանատվությունը տարածվում է նաև այն տեղական վարչակազմի գործողությունների վրա, որը գործում է ի շնորհիվ իր օժանդակության: Դատարանը նշեց, որ Ռուսաստանի Դաշնությունը օժանդակել էր անջատողական իշխանություններին իր քաղաքական հայտարարություններով, որ նրա զինվորական անձնակազմը մասնակցել էր մարտերին, և որ այն շարունակել էր ռազմական, քաղաքական ու տնտեսական օժանդակությունը խաղաղության համաձայնագրի կնքումից հետո: Ավելին, դիմումատուները ձերբակալվել էին Ռուսական զորամիավորումների մասնակցությամբ, իսկ նրանցից երեքը կալանքի տակ էին պահվել այդ զորամիավորումների տեղակայման վայրում: Հետևաբար, դիմումատուները գտնվում էին Ռուսաստանի Դաշնության իրավագործության ներքո: Չնայած այդ ժամանակ Կոնվենցիան կիրառելի չէր Ռուսաստանի Դաշնության նկատմամբ, Դատարանը գտավ, որ դեպքերը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն գործողությունները, որոնց մասնակցել են Ռուսաստանի Դաշնության գործակալները, այլ նաև դիմումատուների հանձնումը անջատողական ռեժիմին՝ դրա անօրինականության ու հակասահմանադրականության լիարժեք գիտակցմամբ: Կոնվենցիայի վավերացումից հետո Ռուսական բանակը շարունակում էր Մոլդովայի տարածքում ունենալ էական ներկայություն և Ռուսաստանի իշխանությունները լուրջ ֆինանսական աջակցություն էին տրամադրում: Այսինքն «Տրանսլնեստրիա Մոլդովական Հանրապետությունը» գտնվում էր նրա արդյունավետ իրավագործության, կամ նվազագույնը Ռուսաստանի Դաշնության որոշիչ ազդեցության ներքո և նա դիմումատուների ձակատագրի համար շարունակական պատասխանատվություն էր կրում: Հետևաբար,

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

դիմումատուները գտնվում էին Ռուսաստանի Դաշնության իրավազրույթային ներքո, ով էլ պատասխանավորություն էր կրում նրանց համար:

Իրավազրույթային խնդիրը կենտրոնականն էր նաև *Իսսասան և այլքըն ընդդեմ Թուրքիայի (Issa and Others v. Turkey)* գործով^{xxvi}, որը վերաբերում էր 1995 թվականին Հյուսիսային Իրաքում մի խումբ հովիվների սպանությանն ու խեղմանը: Դիմումատուն պնդում էր, որ ռազմական օպերացիա իրականացնող Թուրքական զորամիավորումներն են պատասխանատվություն կրում դրա համար: Չանյած անվիճելի էր այն փաստը, որ գործի հանգամանքները տեղի ունենալու ընթացքում իրականացված վեց շաբաթյա օպերացիային ներգրավված էին մեծ թվով Թուրքական զորամիավորումներ, Դատարանի համար ակնհայտ չէր, այն թե արդյոք Թուրքիան «իրականացնում էր արդյունավետ վերահսկողություն Հյուսիսային Իրաքի ամբողջ տարածքում»: Հետևաբար, վճռական հարցը կայանում էր նրանում, արդյոք Թուրքական զորամիավորումներ եղել են այն տարածքում, որտեղ կատարվել է դեպքը, և այդ առումով դատարանը այդ փաստը չհամարեց պատշաճ ապացուցված: Դրանից հետևում է, որ հանգուցյալները պատասխանող Պետության իրավազրույթային դուրս էին:

«Հիմնարար» իրավունքներ (2-րդ և 3-րդ հոդվածներ)

Կյանքի իրավունքը հիշատակվում է Մեծ Պալատի երեք վճիռներում, որոնցից յուրաքանչյուրն անդրադառնում է այդ իրավունքին բոլորովին տարբեր տեսանկյուններից: *Վոն ընդդեմ Ֆրանսիայի (Vo v. France)*^{xxvii} գործում, դիմումատուն, ով թերապևտիկ աբորտի էր ենթարկվել բժշկական անզգուշության հետևանքով, դատարան էր բողոքել ինչպես իր անձամբ կրած վնասի (այս իրավախախտման վրա հետագայում տարածվել էր համաներումը) և իր չծնված երեխայի սպանության համար: Ինչևէ, Վճռաբեկ դատարանը վճռել էր, որ արգանդում երեխայի պտուղի մահվան հանգեցրած բժշկական անզգուշությունը անզգույշ սպանության հանցակազմ չի պարունակում, քանի որ Ֆրանսիական օրենսդրությունը պտուղը չի դիտում որպես մարդ արարած, որն էլ հետևաբար չի ընկնում քրեական օրենքի պաշտպանության ներքո: Մեծ Պալատը որոշում չկայացրեց այն հարցի կապակցությամբ, արդյոք չծնված երեխան ընկնում է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պաշտպանության ներքո, սակայն նշեց, որ պտղի և մոր շահերն անբաժանելի են, հետևաբար բժշկական անփութության հետևանքով կրած վնասների համար իշխանությունների դեմ քաղաքացիական բողոք բերելու հնարավորությունը բավարար է Պետության դրական պարտավորությունները բավարարելու համար, նույնիսկ եթե ենթադրենք, որ 2-րդ հոդվածը կիրառելի էր:

Վերն արդեն հիշատակված *Օներիլդիզի (Öneriyıldız)* կարևոր գործում Մեծ Պալատը վտանգավոր գործողությունների նկատմամբ տարածեց Պետության պատասխանատվությունն առ այն, որ պետք է ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ կյանքը իրական ու ակնկալվող սպառնալիքից

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

պաշտպանելու համար, որի մասին իշխանությունները պետք է տեղյակ լինեին: Դատարանը գտավ, որ Պետության դրական պարտավորությունը «պետք է մեկնաբանվի որպես պարտավորություն, որը տարածվում է ցանկացած հասարակական կամ այլ գործունեության վրա, որտեղ կյանքի իրավունքը կարող է վտանգվել, և արտադրական գործունեության նկատմամբ, որն իր բնույթով վտանգավոր է ինչպես օրինակ թափոնների հավաքման գործընթացը: Սույն գործը վերաբերում էր աղբանոցում տեղի ունեցած մեթանի պայթյունին, որի շուրջ տարիներ շարունակ կառուցվել էր գետնախորշերի թաղամասը: Աղբանոցից պոկված թափոնները ավերել էին դիմումատուի տունը, և դրա հետևանքով մահացել էին նրա ընտանիքի մի քանի անդամներ: Դատարանը գտավ, որ իշխանությունները տեղյակ էին գետնախորշերի թաղամասի բնակիչներին սպառնացող վտանգի մասին, և որ նրանք ձեռք չէին առել համապատասխան միջոցներ այդ վտանգը կանխելու համար: Դատարանը գտավ, որ առկա էին միջոցներ, որոնք անհարժեշտ էր ձեռք առնել և որ դրանք անհամաչափ ծախսատար չէին և լրացրեց, որ բնակիչներին վտանգի մասին պարզապես տեղեկացնելը բավարար չէր կարող համարվել: Գետնախորշերի թաղամասի անօրինական բնույթի առումով, Դատարանը գտավ, որ գոյություն ուներ շինությունների կառուցումը թույլատրող քաղաքականություն: Դատարանը եզրակացրեց, որ առկա է 2-րդ հոդվածի նյութական խախտում: Դատարանը նաև վճռեց, որ առկա է նաև այդ դրույթի դատավարական նորմերի խախտում: Չնայած և վարչական և քրեական վարույթներն իրականացվել էին և դրանց արդյունքում պարզվել էր պատասխանատուների (երկու քաղաքապետերը) անձը, Դատարանը բավարարված չէր տեղի ունեցած մահվան դեպքերի առնչությամբ իրականացված քրեական վարույթներով, քանի որ դրանք պատասխանատվություն էին նշանակել միայն պաշտոնական պարտականությունները կատարելու հարցում անփութություն ցուցաբերելու համար: Դատարանի կարծիքով, դատավարությունը բավարար ուշադրություն չէր դարձրել կյանքի իրավունքի արժեքի կարևորությանը:

Մակարացիսն ընդդեմ Հունաստանի (Makaratzis v. Greece) գործով^{xxviii}

Մեծ Պալատի երրորդ վճիռը վերաբերում էր Աթենքի փողոցներում ծավալված մեքենայի հետապնդմանը, որում ներգրավվել էին մի շարք ոստիկանության ծառայողներ, որոնցից մի քանիսը այդ ընթացքում հերթապահության մեջ չէին գտնվում: Դիմումատուն հաղթահարում է մի շարք ճանապարհային արգելքներ և բախվում այլ մեքենաների, վիրավորելով երկու վարորդների, մինչև բենզալցակայանի մոտ կանգնեցվելը, որտեղ ոստիկանությունը շարունակում է կրակել նրա վրա, պատճառելով մի շարք մարմնական վնասվածքներ: Ոստիկանության յոթ ծառայողները, որոնց նկատմամբ քրեական գործ էր հարուցվել, արդարացվում են այն հիմքով, որ հնարավոր չի լինում որոշել արդյոք նրանց կրակոցներն են, որ վիրավորել էին դիմումատուին, քանի որ տեղի են ունեցել նաև շատ այլ կրակոցներ, որոնց կատարողների անձը չի պարզվել: Դատարանը նախ գտավ, որ 2-րդ հոդվածը կիրառելի է, քանի որ դիմումատուն զոհ էր մի վերաբերման, ինչը վտանգել

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

էր նրա կյանքը և նրա կենդանի մնալը միայն բարի բախտ ունենալու արդյունքն է: Ընդունելով, որ ոստիկանությունը կարող էր ողջամտորեն գնահատել զենքի կիրառման անհրաժեշտության առկայությունը, ինչը նշանակում է, որ մահվան սպառնալիք առաջացնող ուժի կիրառումը կարելի է ասել որ արդարացված էր, Դատարանն այնուամենայնիվ 2-րդ հոդվածի խախտում արձանագրեց: Միջոցառումը ներգրավել էր մեծ թվով ոստիկանության ծառայողների մի քառասյին ու հիմնականում անվերահսկելի հետապնդման մեջ, որտեղ բացակայում էր հետապնդման հստակ ղեկավարումը: Իրավիճակի վատթարացումը հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ ժամանակ, ոչ անհատ ոստիկանները ոչ էլ փախնող անձը կամ ոստիկանական օպերացիան, չէին կարող օգուտ քաղել ներպետական օրենսդրությունից կամ ձևավորված պրակտիկայից, քանի որ դրանք ֆիզիկական ուժի կամ զենքի կիրառման հստակ կանոններ չէին սահմանում: Նորից, Դատարանը նաև գտավ, որ առկա է դատավարական նորմերի խախտում, քանի որ հետաքննությունը ոչ լրիվ ու անբավարար էր անցկացվել, մասնավորապես հաշվի առնելով իշխանությունների անկարողությունը բացահայտել միջադեպին ներգրավված ոստիկանության բոլոր ծառայողներին:

Զերբակալման պատշաճ համակարգման ու վերահսկողության բացակայությունը հաշվի է առնվել նաև *Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի (Nachova and Others v. Bulgaria)*^{xxix} գործով, որն հետագայում հանձնվել է Մեծ Պալատին: Գործը վերաբերում է զինվորական ոստիկանության կողմից ծնունդով գնչու երկու մարդու սպանությանը, ովքեր փախել էին կալանքի վայրից, որտեղ պահվում էին պարտադիր զինվորական ծառայության վայրից առանց թույլտվության բացակայելու համար: Պալատը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոստիկանության ծառայողները կարող էին նկատել, որ դասալիքներն անգն էին և չէին ցուցաբերում որևէ սպառնալի վերաբերմունք, եզրակացրեց, որ հրազենի օգտագործումը «բացարձակապես անհրաժեշտ չէր» 2-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով: Պալատը նաև գտավ, որ առկա է 2-րդ հոդվածի խախտում: Սակայն գործի առավել էական առանձնահատկությունը կայանում էր 14-րդ հոդվածի կրկնակի խախտման առկայության հաստատման մեջ, այն հիմքով, որ իշխանությունները չեն ներկայացրել որևէ բավարար բացատրություն, որը ցույց կտար որ տեղի ունեցածը պետության ներկայացուցիչների արգելված խտրական վերաբերմունքի արդյունք չի հանդիսացել և որ նման հնարավորության առկայության վերաբերյալ քննությունն անբավարար էր^{xxx}:

2-րդ հոդվածի ընթացակարգային խախտման հարցին անդրադարձել է նաև *Սլիմանին ընդդեմ Ֆրանսիայի (Slimani v. France)* գործով վճիռը^{xxxi}: Դիմումատուի զուգընկերը մահացել էր կալանավայրում՝ արտաքսմանը սպասելու ընթացքում: Չնայած Դատարանը գտավ, որ դիմումատուն 2-րդ և 3-րդ հոդվածների նյութական խախտման առումով չէր սպառել ներպետական իրավական պաշտպանության միջոցները, եզրակացրեց, որ դատավարական նորմի խախտում է տեղի ունեցել, քանի որ նա մահվան պատճառների

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

վերաբերյալ հետաքննության մատչելիություն չի ունեցել: Այն, որ դիմումատու կարող էր բողոք ներկայացնել և մասնակցել վարույթներին, Դատարանի կարծիքով բավարար չէր: Այսպիսով, բանտում մահվան յուրքանչյուր կասկածելի դեպքում, հանգուցյալի ժառանգը չպետք է պարտավորված լինի պաշտոնական բողոք ներկայացնելու նախաձեռնության ցուցաբերել կամ պատասխանատվություն կրել հետաքննության համար: 2-րդ հոդվածն ավելի շուտ պահանջում է որպեսզի ժառանգը մեխանիկորեն ներգրավվի մահվան դեպքի կապակցությամբ իշխանությունների հարուցած վարույթում:

Ինչպես և նախորդ տարիներին, մի շարք վճիռներ վերաբերում էին Թուրքիայում անհայտ անձանց կողմից կատարված սպանություններին ու առևանգումներին: Դրանցից մեկում հաստատվեց կյանքի իրավունքի նյութական խախտումը^{xxxii}, բայց մեծամասնությունում խախտումները վերաբերում էին միայն իշխանությունների կողմից իրականացված հետաքննության ոչ պատշաճ լինելուն^{xxxiii}: Այդ գործի հանգամանքները տեղի էին ունեցել 1990-ական թվականներին, մասնավորապես 1994-1995 թվականներին: Մի շարք գործերում խնդիրը վերաբերում էր ռազմական գործողությունների, օրինակ գյուղերի ռմբակոծման, հետևանքով առաջացած մահվան դեպքերին^{xxxiv}: 1993 թվականի դեքտեմբերին վերաբերող այդ գործերից մեկում 2-րդ հոդվածի մասով մի շարք հարցեր էին բարձրացվել^{xxxv}: Դատարանն ընդունեց, որ անվտանգության ուժերի կողմից գյուղի վրա ինտենսիվ կրակ բաց անելը հանդիսանում էր «գյուղից նրանց վրա նախապես կատարված կրակոցների տակտիկական հակահարվածը» և չէր կարող համարվել որպես ուժի անհամաչափ կիրառում: Դատարանը հաշվի առավ տվյալ տարածքում գինված ընդհարման առկայությունը և այն հանգամանքը, որ տուժել էր ընդհամենը մեկ խաղաղ բնակիչ: Այնուամենայնիվ, Դատարանը խախտումներ արձանագրեց միջադեպի այլ հանգամանքների առնչությամբ: Նախ, խաղաղ բնակչի՝ մի երեխայի առնչությամբ, չնայած Դատարանը երեխայի մոր բողոքն առ այն, որ անվտանգության ուժերը երեխային բավարար բժշկական օգնություն չէին ցուցաբերել և որ երեխան կիրկվել, եթե անվտանգության ուժերը անհրաժեշտ միջոցներ ձեռք առնեին, համարեց բժշկական ապացույցների տեսանկյունից անհիմն ու մեծապես շահարկելի, այնուամենայնիվ, վճռեց, որ քարացած անտարբերությունը, որը անվտանգությանն ուժերը դրսևորել էին խաղաղ բնակիչների հնարավոր ներկայության առումով առաջացնում է «կյանքը պաշտպանելու» Թուրքիայի պարտավորության խախտում: Ընթացակարգային խախտումներ արձանագրվեցին նաև իրականացված հետաքննության անարդյունավետության առումով: Երկրորդ, Դատարանը 2-րդ հոդվածի նյութական ու ընթացակարգային խախտում գտավ կապված անհայտ պնևմոնիայից գյուղացիներից մեկի մահվան հետ այն բանից հետո, երբ բազմաթիվ մարդկան ստիպել էին քայլել ձյան միջով՝ առանց համապատասխան հագուստի և կոշիկի: Այնուամենայնիվ, Դատարանը խախտում չարձանագրեց երեխայի գտած ականի պայթյունի հետևանքով նրա

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

մահվան ու նրա քրոջ մարմնական վնասվածք ստանալու կապակցությամբ: Իրեն ներկայացված ապացույցների հիման վրա Դատարանը չկարողացավ որոշել, թե ինչպես էր ականը հայտնվել այդտեղ և հետևաբար չկարողացավ եզրակացնել, որ Թուրքական իշխանությունները խախտել են կյանքը պաշտպանելու իրենց դրական պարտավորությունը:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի առումով, կան մի շարք հիմնականում ստանդարտ գործեր որոնք վերաբերում են կալանավորներին պահելու պայմաններին^{xxxvi} ու կալանավորների նկատմամբ դրսևորվող վատ վերաբերմունքին^{xxxvii}: Մի քանի վճիռներում Դատարանը եզրակացրեց, որ դիմումատուների նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքը խոչտանգում է հանդիսանում^{xxxviii}: Վատառողջ, տարեց կամ շատ տկար անձանց կալանքի տակ պահելու խնդիրը, որն արդեն բարձրացվել էր *Մուիսելն ընդդեմ Ֆրանսիայի (Mouisel v. France)*^{xxxix} և *Հենաֆն ընդդեմ Ֆրանսիայի (Hénaf v. France)*^{xl} գործերում, ինչպես նաև գանգատն ընդունելի հայտարարելու մասին մի շարք այլ որոշումներում^{xli}, ծագել է նաև 2004 թվականի որոշ գործերում: *Ֆարբթուսն ընդդեմ Լատվիայի (Farbutus v. Latvia)* գործը^{xlii} վերաբերում էր մարդկության դեմ ուղղված հանցագործություններ և ցեղասպանություն կատարելու համար դատապարտված 83-ամյա կաթվածահար անձին, ով բանտում էր մնացել ավելի քան մեկ տարի մինչև իշխանությունները ընդունել էին, որ նրա նկատմամբ բավարար հոգ տանելու համար չունեն ո՛չ միջոցներ և ո՛չ էլ անձնակազմ: Դատարանները ազատ չէին արձակել նրան, չնայած այդ մասին ստացված բժշկական եզրակացություններին: Եվրոպական դատարանը գտավ որ առկա է 3-րդ հոդվածի խախտում: Այլ գործերում, ինչևէ, Դատարանը գտավ որ խախտում առկա չէ^{xliii}: Այսպես, *Մատենցիոն ընդդեմ Ֆրանսիայի (Matencio v. France)*^{xliv} գործով, Դատարանը վճռեց, որ ազատությունը սահմանափակված անձի շարունակական կալանավորումը չի հանգեցրել այնպիսի ծանր հետևանքների, որոնց հիման վրա կարող է 3-րդ հոդվածի մասով որևէ հարց ծագել: *Գելֆմանն ընդդեմ Ֆրանսիայի (Gelfmann v. France)* գործով^{xlv}, բժշկական եզրակացությունները միասնական չէին այն հարցի կապակցությամբ, արդյոք դիմումատուն, ով ՁԻԱՀ-ով հիվանդ էր, պետք է ազատ արձակվեր, թե ոչ: Դատարանը գտավ, որ այն վերաբերմունքը և օգնությունը, որ նա ստացել էր, ունեին նույն մակարդակը ինչը հնարավոր էր ապահովել բանտից դուրս, և եզրակացրեց, որ ո՛չ նրա առողջական վիճակը և ո՛չ էլ տառապանքը, որ դիմումատուն իր պնդմամբ կրել էր, չեն առաջացնում այնպիսի ծանր հետևանք, որ պահանջվում է նրա նկատմամբ նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորման փաստը հաստատելու համար: Դատարանը նաև նշեց, որ դիմումատուի առողջական վիճակի վատթարացման դեպքում Ֆրանսիայի իշխանությունները կարող էին համապատասխան միջամտություն ցուցաբերել: Այս առումով անհրաժեշտ է նշել նաև Թուրքիայի դեմ բերված մոտ հարյուր գանգատները, որոնք վերաբերվում են Վերնիկ-Կորչակով սինդրոմով տառապող հացադուլ հայտարարած կալանավորներին: Դրանցից հինգը հայտարարվել էին ընդունելի^{xlvi} և ավելի քան ութ գանգատ ուղարկվել էին պատասխանող Կառավարությանը գրավոր առարկությունների համար:

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

Ըստ Կառավարության, ավելի քան 700 կալանավորների մոտ հայտնաբերվել էր այդ սինդրոմը և ավելի քան 200-ը ազատ էին արձակվել առողջական ծանր վիճակում գտնվելու հիմքով: Մինչդեռ մնացած դեպքերում կալանավորների առողջական վիճակը բավարար չէր համարվել նրանց ազատ արձակելու որոշում կայացնելու համար:

Այս կապակցությամբ, վերջապես, կարելի է նշել, որ քառասուն տարի առաջ դատապարտված լինելու հիմքով անձի շարունակական կալանքին վերաբերող գանգատը անընդունելի էր հռչակվել^{xlvii}, իսկ Միացյալ Թագավորությունում սպանության համար պարտադիր ցմահ բանտարկությանը վերաբերող գանգատի կապակցությամբ Կառավարությունը ծանուցվել էր գրավոր բացատրություններ ներկայացնելու համար^{xlviii}:

Արձանագրվել են արտաքսմանը վերաբերող մի քանի գործեր, որոնցից, սակայն, Նիդեռլանդներից Շրի-Լանկա Թամիլներին արտաքսելու դեպքերին վերաբերող երկու գործում^{xlix}, Դատարանը վճռեց, որ արտաքսումը 3-րդ հոդվածի խախտում չի առաջացնում, եթե դիմումատուի հայրենիքում նրա համար ուղղակի և իրական վտանգի առկայության մասին ապացույցները բացակայում են: Այդ առումով, ընդունելով որ Շրի-Լանկայում իրավիճակը դեռ կայուն չէ, Դատարանը միաժամանակ հղում կատարեց խաղաղ գործընթաց սկսելու մասին հակամարտող հիմնական կողմերի խոստումներին և «իրական առաջընթացի գրանցմանը, որը հանգեցրել էր նախկինում տիրող իրավիճակի լարվածության թուլացմանը»:

Դատարանը հաճախ ստիպված է լինում քննել դեպքեր, երբ արտաքսված անձինք պնդում են, որ իրենց հայրենիք վերադառնալու դեպքում նրանք կենթարկվեն անմարդկային վերաբերմունքի և մահվան վտանգի, և Դատարանի Կանոնների 39-րդ կանոնի հիման վրա միջամտելու և արտաքսումը կասեցնելու վերաբերյալ խնդրանքներ են պարբերաբար ներկայացվում: Դիմումատուները հաճախ նշում են ոչ միայն ապաստան հայցելու իրենց իրական հիմքերը, այլև իրենց առողջական ծանր վիճակը և այն անցանկալի ազդեցությունը, որ արտաքսումը կարող է թողնել նրանց առողջական վիճակի վրա: Այս խնդրանքների գերակշիռ մասը մերժվում է Դատարանի համապատասխան Բաժանմունքի Նախագահի կողմից: Սկզբունքորեն, բավարար չէ ցույց տալ, որ արտաքսման վայր երկրում իրավիճակը վտանգավոր է. դիմումատուն պետք է ապացուցի, որ անձնապես իր համար առկա է ուղղակի վտանգ, օրինակ ցույց տալով, որ նախկինում իր նկատմամբ ցուցաբերվել է վատ վերաբերմունք ու բռնություններ և իշխանությունները ակտիվորեն որոնում են իրեն: Բացի դրանից, միջամտության հնարավորությունը սովորաբար բավականին ցածր է, եթե դիմումատուն արտաքսվում է մեկ այլ Անդամ Պետություն: Արտաքսմանը վերաբերող շատ գանգատներ անընդունելի են հռչակվել: 2004 թվականին տեղ գտած օրինակներից մեկը, ենթադրյալ քաղաքական ակտիվիստիⁱ ու միսեռամոլիⁱⁱ Իրան արտաքսման դեպքն է: Միևնույն ժամանակ, Դատարանը ընդունելի հռչակեց մի գանգատ, որը վերաբերում էր զինվորական

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

Ժառանգությունից խուսափած և բանակը քննադատած մի անձի էրիտրեա արտաքսման դեպքին^{lii}:

Վերջին ժամանակներս աճել է գործերի թիվը, որտեղ դիմումատուները պնդում են որ բավարար բժշկական օգնություն չեն ստանա արտաքսման վայր երկրում: Այս հարցն առաջին անգամ բարձրացվել է *Դ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (D.v.the United Kingdom)* գործում^{liii}, որտեղ Դատարանը վճռեց, ՁԻԱՀ-ով հիվանդ անձին Սուրբ Քիթս [կղզի] արտաքսելը, որտեղ նա չէր ստանա բժշկական կամ սոցիալական բավարար օգնություն, կառաջացներ 3-րդ հոդվածի խախտում^{liv}: Այնուամենայնիվ, մի քանի վերջերս ներկայացված գործերով, Դատարանը գանգատներն անընդունելի հայտարարեց: *Նդանգոյան ընդդեմ Շվեդիայի (Ndangoya v. Sweden)*^{lv} և *Ամեգնիգան ընդդեմ Նիդերլանդների (Amegnigan v.the Netherlands)*^{lvi} գործերով, որոնք ևս վերաբերում էին ՁԻԱՀ-ով հիվանդ դիմումատուներին, Դատարանը հաշվի առավ այն հանգամանքները, որ երկու դեպքում էլ դիմումատուների հիվանդությունը իր վերջին փուլում չէր գտնվում, և որ նրանք իրենց հայրենի երկրներում՝ Տանզանիայում և Տոգոյում համապատասխանաբար, զրկված չէին պատշաճ բժշկական օգնությունից և ընտանիքի օժանդակությունից: Դատարանը նաև նշեց, որ այն հանգամանքը, որ դիմումատուները Շվեդիայում կամ Նիդերլանդներում կունենային ավելի լավ պայմաններ քան իրենց հայրենի երկրներում չի կարող էական համարվել 2-րդ և 3-րդ հոդվածների իմաստով: Դատարանը նմանապես անընդունելի հայտարարեց Ռուինիայում բավարար հոգեբանական օգնության բացակայությանը^{lvii} և հետվնասվածքային խանգարմամբ տառապող մի ընտանիքի Բոսնիա և Հերցոգովինա արտաքսմանը վերաբերող գանգատները^{lviii}:

Դատավարական երաշխիքներ (Կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 13-րդ հոդվածներ և Թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդված)

Ասսանիձեի գործում արդեն հիշատակվել է 5-րդ հոդվածի խախտման մասին, ինչը արդյունք էր դիմումատուին ազատ արձակելը Աջարիայի իշխանությունների կողմից մերժելը, չնայած, որ վերջինս արդարացվել էր Վրաստանի Գերագույն դատարանի կողմից: *Իլասկուն և մյուսները (Ila Aescu and Others)* գործով, որը նույնպես արդեն հիշատակվել է, Դատարանը 5-րդ հոդվածի խախտում գտավ «Տրանսդնեստրիա Սոլդովական Հանրապետության Գերագույն դատարանի» կողմից դիմումատուների շարունակական կալանքի հիմքով: Չնայած Դատարանը *ratione temporis* իրավասություն չունեի այդ դատարանում իրականացված վարույթների՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածին համապատասխանությունը քննելու առումով, 5-րդ հոդվածի խախտում արձանագրելիս, հաշվի առավ այն, որ դա «կիրառվել էր մի կազմակերպության կողմից, որը միջազգային իրավունքի տեսանկյունից անօրինական [էր] և չէր ճանաչվել միջազգային հանրության կողմից», որ դա պատկանում էր մի համակարգի «որը դժվար կլինի պնդել թե գործում է Կոնվենցիայի իմաստով պատշաճ դատական ավանդույթներին

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

համապատասխան սահմանադրական ու իրավական հիմքի վրա» ինչը ապացուցվում է «հանգամանքների ակնհայտ կամայական բնույթով, որոնց պայմաններում դիմումատուները դատապարտվել ու պատասխանատվության են ենթարկվել»:

Գուսինսկին ընդդեմ Ռուսաստանի (Gusinskiy v. Russia) գործով^{lix}, Դատարանը գտավ որ առկա է ոչ միայն Կոնվենցիայի 5-րդ, այլ նաև 18-րդ հոդվածի խախտում, որի համաձայն Կոնվենցիայով թույլատրվող սահմանափակումները «չեն կիրառվում որևէ այլ նպատակով, բացի այն, որի համար դրանք նախատեսվել են»: Գործում Նախարարի պաշտոնակատարի կողմից ստորագրված համաձայնագրով դիմումատուին որոշ մեղադրանքներ ներկայացնելն կապվում էր պետական ընկերությանը իր լրատվական ընկերությունը վաճառելու հետ: Դատարանը նշեց, որ «հանրային իրավունքի նշանակության ընթացակարգերի, ինչպես օրինակ քրեական վարույթների ու կալանքի, նպատակը չի [եղել] դրանք՝ որպես կոմերցիոն պայմանագրերի կնքման քաղաքականության մաս կիրառելը» և գտավ, որ դիմումատուի կալանքի տակ լինելու ընթացքում իրեն համաձայնագիր կնքելու առաջարկ անելը նշանակում է, որ քրեական վարույթը օգտագործվել է իրեն վախեցնելու համար: Հետևաբար, չնայած կալանքը նպատակ ուներ 5-րդ հոդվածի 1-ին կետի (c) ենթակետին համապատասխան անձին տանել իրավասու դատարանի մոտ, այն կիրառվել էր նաև այլ նպատակներով:

Դատարանը նախկինում իր կայացրած մի շարք վճիռներում ընդգծել է կալանքի տակ պահելու ընթացակարգի պատշաճ փաստաթղթավորումը, որպես կամայական կալանքի բացառման երաշխիք, և *Ահմեդ Օզկանն ու այլոք ընդդեմ Թուրքիայի (Ahmet Özkan and Others v. Turkey)* գործով^{lx} վերահաստատել է դա հետևյալ ձևակերպմամբ. «կալանքի տակ պահելու պատշաճ փաստաթղթային ձևակերպման բացակայությունը հանգեցնում է 5-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների խախտմանը ... [և] կալանավորվածներին պահելու վայրի ժամկետի տարեթվի, ինչպես նաև նրանց կալանքի հիմքերի և կալանքն իրականացրած անձանց մասին պատշաճ տվյալների արձանագրման բացակայությունը պետք է դիտել որպես 5-րդ հոդվածի նպատակների խախտում ...»:

Հետաքրքիր հարցեր էին բարձրացնում նաև 5-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա բերված մի քանի անհատական գանգատներ: *Ռ.Լ-ն և Մ.Ջ.Դ-ն ընդդեմ Ֆրանսիայի (R. L. and M.-J.D. v. France)* գործով վճռում^{lxi}, Փարիզի ռեստորաններից մեկի սեփականատերը, հարևան ռեստորանի սեփականատերերի հետ ունեցած մի շարք վիճաբանություններից հետո տարվել էր ոստիկանատուն և ամբողջ գիշեր պահվել հոգեբուժական բաժանումում: Արձանագրելով այն հանգամանքը, որ դիմումատուի շարունակական կալանքը հիմնավորվում էր միայն նրանով, որ բժիշկը լիազորված չէր նրան բաց թողնել, Դատարանը գտավ, որ բացակայում են բժշկական տեսանկյունից որևէ հիմնավորումներ և եզրակացրեց, որ առկա է 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: *Հիլդա Հաֆշտեյնսդոտիրն ընդդեմ Իսլանդիայի (Hilda Hafsteinsdóttir v. Iceland)* գործով^{lxii}, դիմումատուն գիշերվա

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

ընթացքում վեց անգամ շղթայակապ տարվել էր ոստիկանություն, քանի որ գտնվել էր ոչ սթափ վիճակում: Դատարանը գտավ, որ առկա է 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում այն հիմքով, որ կալանքի իրավական հիմքը բավարար հստակ և ըմբռնելի չէր^{lxiii}: Վերջապես, Հ.Լ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (*H.L. v. the United Kingdom*) գործում^{lxiv}, Դատարանը Կոնվենցիայի խախտում արձանագրեց մտավոր անկարողունակություն ունեցող մարդուն որպես «պաշտոնապես հիվանդ չհամարվողի» անազատության մեջ պահելը, ով «դժգոհ» էր, սակայն ի վիճակի չէր կամ համաձայնելու կամ մերժելու առաջարկը: Դատարանի համար անակնկալ էր հատկապես փակի տակ պահելու նման դեպքերի նկատմամբ կիրառելի ընթացակարգային երաշխիքների բացակայությունը, որը հետագայում բնորոշվել էր որպես «ազատության սահմանափակում»:

Դատարանն իր նախորդ վճիռներով հստակ սահմանել է այն հիմքերը, որոնք արդարացնում են մեղադրյալին մինչդատական վարույթում կալանքի տակ պահելը: Նախ, ներպետական դատարանները նման կալանքի ժամկետը երկարացնելիս պետք է տան պատշաճ և բավարար հիմնավորումներ: Սովորաբար ներկայացվող հիմնավորումներն են փախուստի վտանգի առկայությունը, և մեղադրյալի կողմից ապացուցման գործընթացի վրա ներագդելու հնարավորությունը, օրինակ վկաներին սպառնալու միջոցով: Ինչևէ, նույնիսկ եթե նման հիմնավորումները ներկայացվում են նախնական փուլում, ապա ժամանակի ընթացքում դրանց կարևորությունը նվազում է և որոշակի փուլում դրանք այլևս հիմք չեն կարող ծառայել մեղադրյալին կալանքի տակ պահելու համար: Բացի դրանից, ազատության իրավունքի և բնականաբար անմեղության կանխավարկածի կարևորությունը հաշվի առնելով, իշխանությունները պարտավոր են հատուկ զգուշություն ցուցաբերել այն դեպքերում, երբ մեղադրյալը գտնվում է կալանքի տակ: Այս չափանիշի հիման վրա, Դատարանը մեծ թվով գործերով 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում արձանագրեց, որոնցից շատերը վերաբերում են մի քանի տարի տևած կալանքին: *Բելչեվն ընդդեմ Բուլղարիայի* (*Belchev v. Bulgaria*) գործով վճռում^{lxv}, Դատարանը այնուամենայնիվ մի քայլ առաջ գնաց եզրակացնելով, որ առկա է խախտում, չնայած նրան, որ կալանքը տևել է միայն չորս և կես ամիս: Դատարանն ընդունեց, որ տևողությունը շատ ավելի կարճ է քան նրանք, որոնք սովորաբար դիտարկվել են նախկինում, սակայն նշեց, որ «5-րդ հոդվածի 3-րդ կետը չի կարող դիտարկվել որպես նախնական կալանքի անհիմն կիրառման իրավունքի տրամադրում, եթե այդ կալանքը սահմանված նվազագույն ժամկետից ավել չի տևում: Ցանկացած տևողության հիմնավորումները, անկախ նրանից, թե ինչքան կարճ է այն, պետք է համոզիչ կերպով ներկայացվեն իշխանությունների կողմից»:

Համապատասխանաբար մի քանի վճիռներ վերաբերվում էին 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դատավարական երաշխիքներին, բացառությամբ *Ֆրոմելթն ընդդեմ Լիխտենշտեյնի* (*Frommelt v. Liechtenstein*) գործով վճիռը^{lxvi}, որը վերաբերում էր նախնական կալանքի ժամկետի երկարաձգման կապակցությամբ դատական նիստ չանցկացնելուն: Այս

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

առունով անհրաժեշտ է հղում կատարել *Ռեյնպրեչթեն ընդդեմ Ավստրիայի (Reinprecht v. Austria)* գործով վճռին^{lxvii}, որում դիմումատու բողոքում էր, որ իր նախնական կալանքի ժամկետը երկարացնելու կապակցությամբ հրապարակային նիստ չանցկացնելը խախտում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածը: Դատարանը գանգատն ընդունելի հայտարարեց և առաջիկայում հնարավորություն կունենա իր վճռում հստակեցնել, թե ինչ չափով է 6-րդ հոդվածը վերաբերում ազատության սահմանափակման խնդրին: Երկար տարիներ ընդունված էր, որ ազատության իրավունքը 6-րդ հոդվածով նախատեսված «քաղաքացիական իրավունք» չէ, և 5-րդ հոդվածի 4-րդ կետը *lex specialis*-է հանդիսանում, սակայն *Աերթսն ընդդեմ Բելգիայի (Aerts v. Belgium)*^{lxviii} գործով Դատարանի սահմանած այն չափանիշը, որ «ազատության իրավունքը, որն այդ գործքում վիճարկվող հարցն էր, քաղաքացիական իրավունք է» որոշակի շփոթություն առաջացրեց:

5-րդ հոդվածին վերաբերող մի շարք վճիռներում բարձրացված հարցերը, ըստ էության, նման էին նախկինում Դատարանին ներկայացված այնպիսի խնդիրների, ինչպիսիք են օրինակ կալանքի օրինականությունը վիճարկելու պատշաճ ընթացակարգի բացակայությունը^{lxix} կամ նման վերանայման տևողությունը^{lxx}:

2004 թվականին տեղի ունեցած հիշարժան և անհանգստացնող զարգացումներից մեկը Պետական իշխանությունների կողմից դատարանի վերջնական վճիռները չկատարելու կամ ուշացումներով կատարելու վերաբերյալ գործերի թվի ակնհայտ աճն էր: Նման վճիռների նշանակալից մասը վերաբերվում էին Մոլդովային^{lxxi} և Ուկրաինային^{lxxii}, իսկ Ալբանիայի դեմ կայացված առաջին վճիռը^{lxxiii} ինչպես նաև Ռուսաստանին^{lxxiv}, Ռումինիային^{lxxv}, Բուլղարիային^{lxxvi}, Հունաստանին^{lxxvii} և Թուրքիային^{lxxviii} վերաբերող այլ վճիռներ, ևս առնչվում էին այս հարցին: Չնայած վճիռների փաստացի թիվը կարող է համեմատաբար փոքր թվալ, դրանք ընդգրկում են ավելի քան վաթսուն անհատական գանգատներ, որոնցից կեսից ավելին բերվել են ընդդեմ Մոլդովայի^{lxxix} և այս հարցերին վերաբերող Դատարանին ներկայացված գանգատների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնդիրը վերաբերում է մի շարք տարբեր երկրների^{lxxx}: Հորնսբին ընդդեմ Հունաստանի (*Hornsby v. Greece*) գործով վճռից սկսած^{lxxxi}, Դատարանը դատական ակտերի կատարումը դիտում է որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված դատարանի մատչելիության ընդհանուր իրավունքի բաղկացուցիչ մաս և չի ընդունում այն փաստարկը, որ միջոցների անբավարարությունը կարող է պետությանն ազատել դատական ակտերի՝ ողջամիտ ժամկետներում կատարումն ապահովելու իր պարտականությունից^{lxxxii}: Մի գործով վճռում, Դատարանը խախտում արձանագրեց, չնայած այն հանգամանքին, որ ներպետական դատական ակտի կատարումը հետաձգվել էր մինչև ֆինանսական միջոցները ձեռք բերելը^{lxxxiii}: Ավելին, դատական ակտը չկատարելը կարող է կապ ունենալ նաև Կոնվենցիայով երաշխավորված այլ իրավունքների հետ: Այսպես, այն դեպքերում երբ խոսքը գնում է գումար տրամադրելու մասին, Դատարանը սովորաբար եզրակացնում է, որ

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

դատարանի վերջնական վճիռը չկատարելը կամ ուշ կատարելը առաջացնում է նաև Թիվ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

Այս առումով կարելի է հիաշատակել նաև *Պինին և այլոք ընդդեմ Ռումինիայի (Pini and Others v. Romania)* գործով վճիռը^{lxxxiv}, որը վերաբերում է իտալացի զույգի կողմից ռումինացի երեխային որդեգրել թույլատրելու մասին որոշումը չկատարելուն: Դատարանը գտավ, որ դատարանի որոշումները կատարելուն ուղղված հարկադիր կատարողների ջանքերի ձախողումը արդյունք էր այն մասնավոր կազմակերպության ակտիվ դիմադրության, որտեղ գտնվում էր երեխան և եզրակացրեց, որ ուժի գործադրման հնարավորությունն օգտագործելը անհամաչափ չէր լինի: Ինչևէ, դատարանը գտավ, որ Պետությունը բավարար միջոցներ ձեռք չէր առել դատարանի որոշումները կատարելու ուղղությամբ, մասնավորապես հիշյալ մասնավոր կազմակերպության պատասխանատու պաշտոնատար անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ չի կիրառել: Դատարանը, հետևաբար, վճռեց, որ առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, չնայած զարմանալիորեն եզրակացրեց, որ դատարանի որոշումները չկատարելու առումով 8-րդ հոդվածի խախտում առկա չէ: *Ասսանիձեի* գործով վճռում^{lxxxv}, Դատարանը դատական ակտերը չկատարելու վերաբերյալ իր պրակտիկան տարածեց նաև քրեական գործերի վրա, եզրակացնելով, որ այն փաստը, որ դիմումատուն իրեն ազատ արձակելու վերաբերյալ դատարանի վերջնական վճիռը ուժի մեջ մտնելուց հետո երեք տարի մնացել է բանտում, առաջացրել է 6-րդ հոդվածի պահանջների խախտում: Հետևելով քաղաքացիական գործերի առնչությամբ ցուցաբերած իր մոտեցմանը, Դատարանը ընդգծեց, որ «անիրատեսական կլիներ, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը, 3-րդ կետի հետ միասին վերցրած Մասնակից Պետության վրա քրեորեն պատժելի արարք կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի կապակցությամբ պարտադրեր դրական պարտավորություններ կատարել, ինչպես նաև մանրամասն ներկայացնել կողմերի իրավունքների, այն է՝ արդար, հրապարակային և արագացված դատավարության մասին, առանց միևնույն ժամանակ հետևելու այդ վարույթի վերջում կայացված վճռի կատարմանը»:

Դատարանի մատչելիության իրավունքի կարևոր կողմերից մեկը իր քաղաքացիական իրավունքները ու պարտականությունները որոշելու և իր նկատմամբ քրեական մեղադրանքներ ներկայացվելու դեպքում դատարան դիմելու իրավունքն է: Այս գաղափարը, որն առաջին անգամ մշակվել է *Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության (Golder v. the United Kingdom)* գործով վճռում^{lxxxvi}, ծագել է տարբեր հանգամանքներին վերաբերող բավականին մեծ թվով վճիռներում և դրա կարևորությունը վերահաստատվել է 2004 թվականին կայացված մի շարք վճիռներում: Վերջին մի քանի տարիներին, դատական անձեռնմխելիության տարբեր տեսակներին վերաբերող բազմաթիվ գանգատներ են եղել, և *Դե ժորիոն ընդդեմ Իտալիայի (De Jorio v. Italy)* գործով^{lxxxvii} վճռում, Դատարանը հաստատեց մոտեցումը, որը արտահայտել էր Իտալիային վերաբերող իր երկու նախկին վճիռներում^{lxxxviii}, եզրակացնելով, որ չնայած պառլամենտական անձեռնմխելիությունը

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

իրավաչափ նպատակ է հետապնդում^{lxxxix}, դրա տարածումը պառլամենտի անդամի այն հայտարարություններ վրա, որոնք նա կատարել է իր ծառայողական գործառույթների իրակացումից դուրս, դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակում է առաջացնում:

Եվս մեկ խնդիր, որը դատարանն արդեն քննել է, վերաբերում է ընթացքի մեջ գտնվող դատական վարույթների արդյունքի վրա ազդեցություն ունեցող օրենսդրական գործողություններին: 2004 թվականին կայացված մի վճռում, դատարանը գտավ, որ մասնավոր դպրոցները կառավարող մարմինների կողմից վճարվող փոխհատուցման չափերի ռետրոակտիվ կրճատումը չի խախտում Կոնվենցիայի 6-րդ հոդվածը^{xc}: Դատարանը գտավ, որ օրենսդիրը միջամտել էր օրենքում առկա տեխնիկական բնույթի սխալը ուղղելու համար՝ իրավական բացթողումը լրացնելու և հավասարությունը վերականգնելու նպատակով: Դիմումատուները, ովքեր հնարավորություն չէին ունեցել պնդելու կատարված ներդրումների ամբողջությամբ հատուցելը, սակայն ընթացակարգերի բացթողումներից օգտվելով ցանկացել էին եկամուտներ ստանալ, գիտեին, կամ պետք է որ իմանային, որ պետությունը պետք է լուծեր իրավական ոլորտի բացթողումները: Օրենսդրական միջամտությունը, հետևաբար, ամբողջությամբ կանխատեսելի էր և լիովին արդարացված հանրային շահերի տեսանկյունից:

Դատարանը *Գորրաիզ Լիզարագան և այլոք ընդդեմ Իսպանիայի (Gorraiz Lizarraga and Others v. Spain)* գործով վճռում^{xcii} նմանապես գտավ, որ Կոնվենցիայի խախտում առկա չէ: Դիմումատուն կարողացել էր հասնել իրենց գյուղի համար ջրհեղեղի վտանգ ստեղծող ամբարտակի կառուցման աշխատանքների ժամանակավոր դադարեցմանը, սակայն դրանից հետո ուժի մեջ է մտել մի օրենք, որը թույլ էր տվել աշխատանքների վերսկսումը: Գերագույն դատարանը կառուցման նախագիծը մասամբ դադարեցրել էր, բայց Սահմանադրական դատարանը այնուհետ վճռել էր, որ նոր օրենքը հակասահմանադրական չէր և հետևաբար Գերագույն դատարանի վճռի կատարումը դարձել էր անհնար: Եվրոպական դատարանը վճռեց, որ օրենքը, որը ընդհանուր կիրառման օրենք էր, չէր ընդունվել օրենքի գերակայությունը խաթարելու նպատակով, մասնավորապես այն ուղղված չէր նախագծվող ամբարտակի օրինականության վերաբերյալ որոշում կայացնելու դատարանների իրավասության վերացմանը: Արդար դատաքննության սկզբունքը պահպանված է այնքանով, որքանով որ դիմումատուն հնարավորություն էր ունեցել վիճարկելու օրենքի կոնկրետ դրույթների սահմանադրականությունը: Սույն գործի հաջորդ կարևոր հանգամանքը կայանում է նրանում, որ Դատարանը ընդունեց, որ ինչպես ներպետական ատյաններում հարուցված վարույթների կողմ հանդիսացած դիմումատու միավորումը, այնպես էլ այդպիսի կողմ չհանդիսացած դիմումատուներն անձամբ, կարող են 6-րդ հոդվածի ենթադրյալ խախտման գոհ համարվել: Սա շեղում է նախկինում կայացված վճիռներից, որոնց համաձայն դիմումատուները, ովքեր ներպետական վարույթների կողմ չէին հանդիսացել չէին կարող համարվել այդ վարույթների ընթացքում ենթադրաբար տեղի

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

ունեցած անարդարությունների զոհ: Այս նոր մոտեցումը սահմանելիս, Դատարանը հիմնվեց այն հանգամանքի վրա, որ դիմումատու միավորումը ստեղծվել էր իր անդամների շահերը պաշտպանելու հատուկ նպատակով, մասնավորապես կապված նրանց տների և կյանքի վրա ամբարտակի կառուցման հետևանքների [կանխման] նպատակով: Դատարանն այս առումով ընդգծեց ժամանակակից հասարակությունում անհատների խմբերի իրավունքների պաշտպանության ոլորտում միավորումների ունեցած դերը:

Ի տարբերության այս վճիռների, *Սկորդինոն ընդդեմ Իտալիայի* (թիվ 1)^{xcii} (*Scordino v. Italy*) գործով վճռում, որն այժմ գտնվում է Մեծ Պալատի վարույթում, Դատարանը վճռեց, որ օրենսդրական միջամտությունն առաջացրել է Կոնվենցիայի խախտում:

Ավելին, այս հարցին վերաբերող Ֆրանսիայի դեմ բերված երկու գանգատներ հռչակվեցին անընդունելի և դրանք քննող Պալատը ընդդատությունը զիջեց Մեծ Պալատին^{xcii}: Մի շարք վճիռներ վերաբերում են դատարանների իրավագործության բացառմանը, կապված՝ Ուկրաինայում քաղաքացիական որոշ գործերի^{xci}, Չեխիայի Հանրապետությունում վարույթային բնույթ ունեցող վարչական որոշումների^{xcv}, Լեհաստանում Սեփականության հանձնաժողովի կայացրած որոշումների^{xcvi}, և Բուլղարիայում Պետական երկաթուղային ընկերության աշխատողներին աշխատանքից հեռացնելու հետ^{xcvii}: Բոլոր այս, ինչպես նաև այն գործերով, որտեղ դիմումատուներին չի հաջողվել ապահովել իրենց քաղաքացիական հայցի ըստ էության քննությունը՝ քաղաքացիական և վարչական դատարանների կողմից այդ հարցերը իրենց ընդդատությունից դուրս համարելու պատճառով, 6-րդ հոդվածի խախտում է արձանագրվել^{xcviii}:

Դատարանի մատչելիության իրավունքի մյուս կողմը իրավական որոշակիության խնդիրն է և մասնավորապես, վերջնական ու պարտադիր կատարման ենթակա վճիռները չվերացնելու հարցը: Այս հարցը քննարկվել է Ռումինիայի դեմ բերված բազմաթիվ գանգատներում, որոնք վերաբերում էին Գլխավոր Դատախազի կողմից Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 330-րդ հոդվածի հիման վրա իրավունքի նորմի խախտման մասին բողոք ներկայացնելուն^{xcix}, սկսած 1999 թվականին քննված *Բրումարեցկու (Brumărescu)* գործով 1999^c: Նմանատիպ ընթացակարգ, որը անգլերեն թարգմանությամբ անվանվում է «վերահսկողական վերանայում», առկա 1 նախկին Խորհրդային բլոկին պատկանող շատ երկրներում: Դատարանը, որը արդեն խախտում էր արձանագրել ինչպես Ուկրաինայի, այնպես էլ Ռուսաստանի դեմ բերված գանգատներում^{ci}, իր դիրքորոշումը վերահաստատեց Ուկրաինային վերաբերող այլ գործերում ևս^{cii}: Նշելով, որ գործի հանգամանքները տեղի ունենալու ժամանակ վերահսկողական վերանայման միջնորդության ներկայացման ժամկետային սահմանափակումներ գոյություն չունեին, Դատարանը եզրակացրեց, որ Վճռաբեկ դատարանը, բավարարելով միջնորդությունը, առջինն դարձրեց ամբողջ դատական վարույթը, որը ավարտվել էր վերջնական ու պարտադիր կատարման ենթակա վճիռ ընդունմամբ: Դատարանն այդ գործերից մեկում

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

ավելացրեց, որ քանի որ հարցը վերաբերում է իրավական որոշակիությանը, պատշաճ չէ երբ նման վերահսկողությունը դատախազի փոխարեն իրականացնում է դատավորը:

Ի տարբերություն նշվածի, Ղատարանը 6-րդ հոդվածի խախտում չգտավ մի գործում, որը վերաբերում էր քրեական գործով վարույթը վերսկսելուն, ինչի արդյունքում դիմումատուն արդարացվել էր^{ciii}: Ղատարանը նշեց, որ «իրավական որոշակիության պահանջը բացարձակ չէ» այն պետք է դիտարկվի «օրինակ թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում, որը պետությանը մասնավորապես թույլ է տալիս վերաբացել գործը նոր երևան եկած հանգամանքների հայտնաբերման դեպքում, կամ երբ նախորդ վարույթներում հայտնաբերվել են էական խախտումներ, որոնք կարող էին ազդել գործի ելքի վրա»: Բացի դրանից, Ղատարանը հղում կատարեց այն հանգամանքին, որ իր վճիռների կատարման կոնտեքստում, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն դիտարկել է գործերի վերաբացում կամ վերաքննություն՝ որպես փոխհատուցման տրամադրման երաշխիք: Հետևաբար, սույն քրեական գործը վերաբացելու հնարավորությունը Կոնվենցիային *prima facie* չի հակասում, և յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է գնահատել, թե արդյոք պահպանվել է արդարացի հավասարակշռությունը: Տվյալ գործի հանգամանքներով, երբ վերահսկողության կարգով վերանայման միջնորդությունը մերժվել էր, արդարացի հավասարակշռությունը պահպանվել էր: Ղատարանը նաև գտավ, որ թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածը, որը սահմանում է, որ երաշխավորում է նույն արարքի համար երկու անգամ չդատապարտվելու ու պատիժ չկրելու իրավունքը, չի խախտվել:

Ինչ վերաբերում է վարույթների արդարության խնդրին, ապա 2004 թվականին որևէ հատուկ հիշատակման արժանի գործ չի եղել, չնայած երկու փոքր խումբ գործեր անդրադարձել են հենց այս հարցին ինչպե՛ս քաղաքացիական, այնպե՛ս էլ քրեական վարույթների կապակցությամբ: Առաջին խումբը վերաբերում է դատավորի՝ նույն վարույթի տարբեր փուլերին մասնակցությանը: *Պիտկանենն ընդդեմ Ֆինլանդիայի (Pitkänen v. Finland)* գործով վճռում^{civ}, դիմումատուն բողոքում էր, որ իր մասնակցությամբ իրականացվող քաղաքացիական վարույթի շրջանակներում կայացված բոլոր դատական նիստերը նախագահում էին տարբեր դատավորներ: Ղատարանը վերահաստատեց, որ գործի վերաբերյալ միանձնյա որոշում կայացնող դատավորի ներկայությամբ մեղադրյալի՝ վկային հարցեր տալու իրավունքը, կարևոր բաղադրիչ է, և եթե կարևոր վկայի հարցաքննությունից հետո դատարանի կազմը փոխվել է, սովորաբար պետք է տեղի ունենա այդ վկայի կրկնակի հարցաքննություն^{cv}: Այնուամենայնիվ, Ղատարանը նաև նշեց, որ արդար դատաքննության պահանջները միշտ չէ որ նույնն են քաղաքացիական վարույթների համար և եզրակացրեց, որ «այն փաստը, որ տարբեր նախագահող դատավորներն իրենց ձեռքի տակ ունեցել են նախկինում կայացած նիստերի արձանագրությունները, որոնց ընթացքում

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

հարցաքննվել են վկաները, բավարար կերպով փոխհատուցում են վարույթներին անմիջապես չմասնակցելը»^{cvii}:

Երկրորդ խումբը վերաբերում է քրեական վարույթներում մեղադրյալի կամ քաղաքացիական վարույթի կողմի ներկայացրած վկաներին լսելը դատարանների կողմից մերժելու խնդրին: Որպես ընդհանուր սկզբունք, ներպետական դատարանների իրավասության մեջ է մտնում այս կամ այն վկային լսելու անհրաժեշտության գնահատումը, և բազմաթիվ վճիռներում Դատարանը գտել է, որ մեղադրյալի պահանջած վկային քննելը մերժելը 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի (d) ենթակետի խախտում չի առաջացնում^{cvii}: Դատարանը վերահաստատեց իր այս մոտեցումը 2004 թվականին կայացված ևս երկու վճիռներում^{cviii}: Այնուամենայնիվ, բացառիկ դեպքերում, նման մերժումը կարող է խախտման հանգեցնել^{cxix}, և *Տանմինենն ընդդեմ Ֆինլանդիայի (Tamminen v. Finland)* գործով^{cx} վճռում, Դատարանը քաղաքացիական վարույթում վկային քննելու մերժման հիմքով 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում արձանագրեց:

Մի շարք գանգատներում բարձրացվում էր դատավորների անաչառության խնդիրը: *Պաբլա Կուն ընդդեմ Ֆինլանդիայի (Pabla Ky v. Finland)* գործով վճռում^{cxii} դիմումատու կազմակերպությունը բողոքում էր, որ խախտվել է իշխանությունների տարանջատման սկզբունքը, քանի որ վերաքննիչ դատարանի փորձագետ անդամներից մեկը, որը մասնակցում էր վարույթին, միևնույն ժամանակ հանդիսանում էր Պաբլամենտի անդամ: Նշելով, որ չկա հիմք ենթադրելու, որ դատավորի՝ որևէ քաղաքական կուսակցության անդամությունը որևէ կապ է ունեցել գործի կողմերի կամ էության հետ, և որ նա նախապես գործի էության կամ դրա հետ կապված օրենսդրական հարցերի առջնությամբ օրենսդիր, գործադիր կամ խորհրդատվական գործառույթներ չի իրականացրել, Դատարանը եզրակացրեց, որ սոսկ այն փաստը որ դատավորը միաժամանակ օրենսդիր մարմնի անդամ է հանդիսանում, նրա անաչառությունը կասկածի տակ դնելու համար բավարար չէ: *Ա.Բ. Կուրտ Կելլերմանն ընդդեմ Շվեդիայի (AB Kurt Kellermann v. Sweden)* գործով վճռում^{cxiii} Դատարանը նմանապես հաշվի առավ գնահատողների և վիճարկվող խնդրի միջև կապի բացակայությունը, որոշելով, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում առկա չէ: Տարբերակելով այս գործը *Լանգբորգերն ընդդեմ Շվեդիայի (Langborger v. Sweden)* գործից^{cxiii}, Դատարանը գտավ, որ աշխատանքային վեճեր քննող դատարանի գնահատողները և նրանց թեկնածուները առաջարկած կազմակերպությունները, օբյեկտիվորեն դիմումատու կազմակերպության շահերին հակասող շահեր չունենին:

Դատարանը նաև առանձնացրեց Ֆինլանդիայի դեմ բերված մեկ այլ գանգատի վերաբերյալ իր կայացրած վճիռը, որը վերաբերում էր դատավորի անաչառությանը, ով դիմումատուի մասնակցությամբ իրականացված նախորդ քաղաքացիական վարույթներում հանդես էր եկել որպես հակառակ կողմի օրինական ներկայացուցիչ^{cxiv}: Դատարանը գտավ, որ *Վետստեյն ընդդեմ Շվեյցարիայի (Wettstein v. Switzerland)* գործը առանձնահատուկ է և

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

Եզրակացրեց, որ 6-րդ հոդվածի խախտում առկա չէ, «հաշվի առնելով, մասնավորապես, ժամանակային հեռավորությունը և վարույթների առաջին և երկրորդ փուլերի քննության առարկա խնդիրների հարաբերակցությունը, այն հանգամանքը որ դատավորը գործել է որպես նախագահող և դատավորը չի ձգել ժամանակը»: Բուլղոսի այլ իրավիճակ էր ծագել *Սան Լեոնարդ Բանդ Կլուբն ընդդեմ Մալթայի (San Leonard Band Club v. Malta)* գործով^{cxvi}, որը վերաբերում էր գործը կրկին լսելու մասին միջնորդության՝ այն դատավորների կողմից քննությանը, ովքեր գործը քննել էին նաև ըստ էության: Դատարանը եզրակացրեց, որ առկա է 6-րդ հոդվածի խախտում, քանի որ նույն դատավորներն էր պետք է որոշեին, թե արդյոք իրենք իրենց նախորդ որոշման մեջ օրենքի մեկնաբանության կամ կիրառման սխալ թույլ էին տվել, թե ոչ: Դատարանը տարբերակեց այս գործը *Թոմանն ընդդեմ Շվեյցարիայի (Thomann v. Switzerland)* գործից^{cxvii}, որտեղ դատավորները նոր տեղեկատվություն էին ստացել, գործը քննում էին նորից՝ ըստ էության կայացնելով նոր որոշում, և կոչված չէին գնահատելու կամ որոշելու իրենց սեփական ենթադրյալ սխալները: *Դեպիետսն ընդդեմ Ֆրանսիայի (Depiets v. France)* գործում^{cxviii} խնդիրն ըստ էության կայանում էր վճռաբեկ դատարանի դատավորի անաչառության մեջ, ով հաջորդաբար քննել էր գործը դատարանին հանձնելու և դատապարտման դեմ օրենքի նորմի խախտման հիման վրա բերված վճռաբեկ բողոքները: Եզրակացնելով, որ 6-րդ հոդվածի խախտում առկա չէ, Եվրոպական դատարանը հաշվի առավ այն, որ դատավորները քրեական գործը ըստ էության չէին քննել, այլ անդրադարձել էին յուրաքանչյուր բողոքի կապակցությամբ օրենքի որոշ նորմերի^{cxix}:

Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի (Kyprianou v. Cyprus) գործով վճիռը^{cxx}, այն վճիռներից էր, որը մեծ թվով արձագանքներ առաջացրեց իրավաբան մասնագետների շրջանում, և վերաբերում էր դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելուն: Գանգատը ներկայումս գտնվում է Մեծ Պալատի վարույթում: Դիմումատուն, ով մարդասպանության վերաբերյալ դատավարությունում մեղադրյալի փաստաբանն էր, տաք բանավեճի մեջ մտավ դատարանի հետ, որի ընթացքում պնդում էր, թե մինչ ինքը խաչաձև հարցաքննություն էր իրականացնում, դատավորները խոսում էին միմյանց հետ և գրություններ փոխանակում^{cxxi}: Դատավորները նրա պնդումները և տոնը գնահատեցին որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում, և ընթացող դատավարությունը կասեցնելով և թույլ տալով փաստաբանին խոսել մինչև նրա նկատմամբ պատասխանատվության նշանակումը, նրան ենթարկեցին կալանքի՝ հինգ օր ժամկետով: Գերագույն դատարանը համաձայնեց, որ դիմումատուի վարքագիծը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք է հանդիսանում և դատարանի վճիռը փոփոխելու հիմք չգտավ: Եվրոպական դատարանն իր Պալատի կայացրած վճռով գտավ, որ առկա է 6-րդ հոդվածի խախտում հետևյալ առումներով. դատարանը անաչառ չի եղել, խախտվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը և դիմումատուին՝ իրեն ներկայացվող մեղադրանքի վերաբերյալ բավարար տեղեկատվություն չի

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

տրվել: 6-րդ հոդվածի կիրառելիությունը, քրեական իրավունքի առումով, չի դիտարկվել^{cxxii}:

Ընդունվել են մի շարք վճիռներ, մասնավորապես Սիացյալ Թագավորության վերաբերյալ, որոնք բարձրացնում են Դատարանի կողմից արդեն քննված հարցերի նոր ասպեկտներ: Դրանք են գանգատները, որոնք վերաբերում են հետաքննություն իրականացնող մարմինների կողմից նյութերը չհրապարակելուն^{cxxiii}, քրեական դատավարությանը անչափահասի արդյունավետ մասնակցության հնարավորությանը^{cxxiv}, քրեական դատավարության ընթացքում ապացույցի օգտագործմանը, որը նախկինում տրվել էր սնանկության վարույթի ընթացքում՝ սանկցիայի կիրառման վախի ազդեցությամբ^{cxxv}: Անհրաժեշտ է նաև նշել Թուրքիայի նախկին Անվտանգության դատարանների անկախությանը և անաչառությանը վերաբերող գանգատների թվի շարունակվող աճի մասին^{cxxvi}: Այս առումով հետաքրքիր զարգացում է Դատարանի նախկինում կայացրած վճիռների տարածումը Ազգային անվտանգության դատարաններում իրականացվող վարույթի նկատմամբ, որը չի պարունակում անվտանգության առանձնահատուկ տարր: *Կանեվին և այլոք ընդդեմ Թուրքիայի (Canevi and Others v. Turkey)* գործով^{cxxvii} դիմումատուի նկատմամբ հետաքննություն է իրականացվել թմրադեղերի հետ կապված իրավախախտման համար: Այնուամենայնիվ, Դատարանը այն մոտեցումն արտահայտեց, որ ազգային անվտանգության հետ կապված իրավախախտումների նկատմամբ կիրառվող պահանջները տարածվում են նաև սովորական քրեական իրավախախտումների վրա, և զինվորական դատավորի առկայությունը Ազգային անվտանգության դատարանում ստվեր է զցում դատարանի վրա՝ դրա անաչառության մասին կասկածներ առաջացնելով, քանի որ մեղադրյալը կարող է իրավաչափորեն վախենալ, որ դատարանը թույլ կտա, որ գործի էության հետ կապ չունեցող եզրահանգումներն ազդեն իր որոշման վրա:

Մի քանի տարաբնույթ գործեր ևս ուշադրության են արժանի: Մեծ Պալատի կողմից *Պերեսն ընդդեմ Ֆրանսիայի (Perez v. France)* գործով կայացված վճռում^{cxxviii}, Դատարանը հնարավորություն ունեցավ «վերջ դնել քաղաքացիական դատավարական վարույթներում 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիության շուրջ եղած անհստակությանը, մասնավորապես քանի որ Բարձր Պայմանավորվող այլ Կողմերը հիմնականում նույն համակարգն ունեն»^{cxxix}: Դատարանը եզրակացրեց, որ այդպիսի վարույթները ընդգրկվում են 6-րդ հոդվածի ներքո, բացառությամբ այն սահմանափակ դեպքերի, երբ քաղաքացիական վարույթներն իրականացվել են միայն պատասխանատվություն սահմանելու նպատակով^{cxxx}: *Դել Լատտեն ընդդեմ Նիդերլանդների գործով (Del Latte v. the Netherlands)* վճռում^{cxxxi} Դատարանը հղում կատարեց Նորվեգիայի դեմ բերված երկու գանգատների կապակցությամբ իր կայացրած վճիռներին, որոնք վերաբերում են արդարացման դատավճռի կայացումից հետո նախնական կալանքի համար փոխհատուցում տրամադրելու պահանջի մերժմանը^{cxxxii}: Ինչպես և այդ գործերով, Դատարանը գտավ, որ առկա է անմեղության կանխավարկածի

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

խախտում^{cxixii}: Մաքֆին ընդդեմ Ֆրանսիայի (*Makhfi v. France*) գործով վճռում^{cxixiv}, Դատարանը վճռեց, որ ամբողջ գիշեր դատաքնությունը շարունակելու հանգամանքը առաջացրել է 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի (b) և (c) ենթակետերի խախտումներ: Դատարանը ընդգծեց ինչպես մեղադրյալի, այնպես էլ պաշտպանների, դատավորների և ատենակալների՝ վարույթին հետևելու համար բավարար առույգ լինելու, և անհրաժեշտության դեպքում դրան արդյունավետ մասնակցելու կարևորությունը:

Դատական վարույթի տևողության խնդրին վերաբերող գործերի առումով արդեն հիշատակվել է գանգատների շարունակաբար աճող թվի մասին, մասնավորապես, ընդդեմ Լեհաստանի^{cxixv} և Ֆրանսիայի գործերով: Այդ առումով, կարելի է նաև նշել, որ մի շարք պետությունների, մասնավորապես Բուլղարիայի^{cxixvi}, Չեխիայի Հանրապետության^{cxixvii}, Ֆինլանդիայի^{cxixviii}, Հունաստանի^{cxixix}, Իռլանդիայի^{cxli}, Լեհաստանի^{cxlii}, Ռուսաստանի^{cxliii}, Սլովակիայի^{cxliiii} և Ուկրաինիայի^{cxliiv} վերաբերյալ կայացված վճիռներում Դատարանը եզրակացրեց, որ դատավարության անողջամիտ երկարատևությունը բողոքարկելու համար ներպետական մակարդակում բացակայում են արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ: Հաշվի առնելով դատական վարույթների երկարատևության հարցի հետ կապված գանգատների մեծ մասնաբաժինը, ներպետական մակարդակում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ձևավորումը հանդիսանում է ամենակարևոր օժանդակությունը, որը պետությունները կարող են իրականացնել՝ նկատի ունենալով Դատարանի աշխատանքի մեծ ծավալները և կուտակված գործերի թիվը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ (Կոնվենցիայի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 14-րդ հոդվածներ, Թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդված և Թիվ 4 Արձանագրության 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածներ)

Մի շարք նոր խնդիրներ են բարձրացվել անձնական կյանքի գաղտնիության հարգման իրավունքի հետ կապված վճիռներում: Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի առջնությամբ, կարելի է հղում կատարել մի վճռի, որը վերաբերում է հիվանդանոցում ստացիոնար բուժում անցնող երեխային, իր մոր կամքին հակառակ, դեղեր տալուն^{cxliiv}, ինչպես նաև թմրադեղերի տեղափոխման մեջ կասկածվող անձին հարկադրաբար փսխող դեղեր տալու մասին որոշմանը^{cxlivi}:

Ինչ վերաբերում է անձնական կյանքը հարգելու բուն իրավունքին, *Վոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի (Von Hannover v. Germany)* գործով վճռում բարձրացվել են կարևոր հարցեր, որոնք վերաբերում են մամուլի ազատության և անձնական կյանքի գաղտնիության նկատմամբ ոտնձգություններից պաշտպանվելու իրավունքի միջև հավասարակշռությանը^{cxliiii}: Դիմումատուն, Մոնակոյի Արքայադուստր Կարոլինը, մասնակի հաջողության էր հասել Գերմանիայի դատարաններում ներկայացրած իր հայցի առումով, որով նա պահանջում էր արգելել

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

սկանդալային թերթերին հրապարակել իր նկարները, որոնք արվել էին առանց իր համաձայնության, և պատկերում էին իրեն մենակ կամ ինչ որ մեկի ընկերակցությամբ տնից դուրս ամենաօրյա կյանքում: Գերմանիայի դատարանները ընդունեցին, որ «Ժամանակակից հանրային գործիչները» անձնական կյանքի գաղտնիության իրավունք ունեն նույնիսկ իրենց տնից դուրս, սակայն միայն այն դեպքում երբ նրանք գտնվում են «մասնավոր վայրում» և յուրաքանչյուրի համար օբյեկտիվորեն ակնհայտ է, որ նրանք ցանկանում են մենակ մնալ և պահում են իրենց այնպես, ինչպես չէին պահի հասարակական վայրերում: Դիմումատուն հաջողություն ունեցավ կապված այն նկարների հետ, որոնք պատկերում էին իրեն իր արական սեռի ներկայացուցիչ ընկերոջ հետ ռեստորանի հետևի այգում, սակայն նրա հայցը չբավարարվեց այն նկարների մասով, որոնք պատկերում էին իրեն «չմեկուսացված վայրում»: 8-րդ հոդվածի խախտում արձանագրելով Դատարանը ընդգծեց այն փաստը, որ նկարները և ուղեկցող մեկնաբանությունները հրապարակվել էին արքայադստեր անձնական կյանքի մանրամասների վերաբերյալ՝ ընթերցողների որոշակի խմբի հետաքրքրությունը բավարարելու համար: Քանի որ դիմումատուն այդ պահին հանրային անձ չէր հանդիսանում և Մոնակոյի անունից որևէ գործողություն չէր իրականացնում, հետևաբար այդ հրապարակումները չէին կարող հասարակության համար ընդհանուր հետաքրքրություն հանդիսացող քննարկումներ առաջացնել, այդ հասկացության իսկական իմաստով: Հետևաբար Դատարանը վճռեց, որ Պատասխանող մասնակից պետությունը խախտել է դիմումատուի անձնական կյանքի գաղտնիության արդյունավետ պաշտպանությունն ապահովելու իր պոզիտիվ պարտավորությունը:

2004 թվականին քննված մի շարք գործեր վերաբերում էին բնապահպանական խնդիրներին, ներառյալ երկու վճիռներ, որտեղ Կոնվենցիայի խախտում էր արձանագրվել հիմնականում իշխանությունների կողմից ներպետական օրենսդրությունը խախտելու կամ դատարանի որոշումները չկատարելու հիմքով: *Թասկին և այլոք ընդդեմ Թուրքիայի (Taskın and Others v. Turkey)*^{cxlviii} գործում, իշխանությունները չէին կատարել դատարանի որոշումը, որով ուժը կորցված էր ճանաչվել կոնկրետ մեթոդի կիրառմամբ ոսկու արտադրության թույլտվությունը՝ շրջակա միջավայրի վրա ոչ բարենպաստ ազդեցություն ունենալու հիմքով: Սակայն հետագայում տրամադրել էր նոր թույլտվություն: *Մորենո Ջոմեզի (Moreno Gómez)* գործում^{cxlix} իշխանությունները պարբերաբար չեն կատարում աղմուկի հսկողության վերաբերյալ կանոնակարգերը՝ պարային ակումբներին և բարերին թույլտվությունը տալով, իմանալով հանդերձ, որ այդ տարաքծը «աղմուկի նկատմամբ զգայուն է»: Այս առումով պետք է արձանագրել, որ թեթև ինքնաթիռի^{cl} ձայնի պատճառած անհարմարությունների և գնչուների բնակավայրի, որում առկա էր աղմուկի և ախտոտվածության բարձր տոկոս^{cli}, տեղափոխումն մերժելու մասին գանգատները անընդունելի են ճանաչվել:

Դատական ակտերի կատարման խնդիրը, որը հիմնականում քննարկվում է 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների ներքո, նաև

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

աճող հաճախականությամբ ծագում է 8-րդ հոդվածի^{clii} կոնտեքստում, հատկապես այն միջոցների պատշաճության առումով, որ իշխանությունները ձեռնարկում են երեխաներին տեսակցելու իրավունքի իրականացումն ապահովելու համար: Արդեն նշվել է, որ *Պինին և այլոք (Pini and Others)* գործով^{cliii}, Դատարանը չնայած 6-րդ հոդվածի խախտում արձանագրեց, միաժամանակ վճռեց, որ 8-րդ հոդվածի խախտում առկա է: Հաշվի առնելով երեխաների շահերը և մասնավորապես իրենց որդեգրմանը նրանց անհամաձայնությունը, Դատարանը գտավ, որ իշխանությունների վրա բացարձակ պարտականություն չի դրված ապահովել, որպեսզի երեխաները լքեն երկիրն իրենց կամքին հակառակ՝ անտեսելով նրանց որդեգրման մասին որոշման օրինականության վիճարկման վարույթների ընթացքը: Երեխաներին տեսակցելու իրավունքի իրականացման հարցերի վերաբերյալ գործերի թվին է դասվում *Կոսմոպուլուն ընդդեմ Հունաստանի (Kosmopoulou v. Greece)* գործը^{cliv}, որտեղ դատարանը խախտում արձանագրեց, և *Վոլեսկին ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Voleský v. the Czech Republic)* գործը^{clv}, որտեղ Դատարանը գտավ որ խախտում առկա է:

Ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին վերաբերվող երկու այլ գործեր անդրադառնում են արտասահմանական կապերից ծնված երեխաների հայրերի իրավունքներին: Այդ գործերի թվին են դասվում *Գյորուոլուն ընդդեմ Գերմանիայի (Görgülü v. Germany)* գործը^{clvi} (երեխայի խնամակալությունը հանձնելը մերժելը, այն դեպքում երբ մայրը լքել էր իրեն) և *Լեբբինկն ընդդեմ Նիդերլանդների (Lebbink v. the Netherlands)* գործը^{clvii} (երեխային տեսակցելու իրավունք տալը մերժելը), որոնցում դատարանը վճռեց, որ առկա է 8-րդ հոդվածի խախտում^{clviii}: Նիդերլանդների դեմ բերված մեկ այլ գանգատում^{clix}, դիմումատուն փորձ էր արել հասնելու իր ենթադրյալ բնական հոր հայրության ճանաչմանը, սակայն արդյունքի չէր հասել: Այնուամենայնիվ, քանի որ նա երբեք հանգուցյալի երեխա պաշտոնապես չէր ճանաչվել, Դատարանը հանգեց հետևյալ եզրակացությանը. «Իրականում, դատարանները խնդիր են ունեցել անդրադառնալու ոչ թե «ընտանեկան կյանքի» հարցին՝ 8-րդ հոդվածի իմաստով, կամ «անձնական կյանքին»՝ անհատական տվյալների առումով, այլ այն հարցի ապացուցմանը, թե արդյոք հանգուցյալի և դիմումատուի միջև իրավական առումով պետք է ճանաչվի ընտանեկան կապ: Այն փաստը, որ դատարանները չեն ցանկացել որոշում կայացնել դիմումատուի ներկայացրած փաստերի հիման վրա, 8-րդ հոդվածի իմաստով հարց չի առաջացնում: Մասնավորապես, դիմումատուն 8-րդ հոդվածի հիման վրա չի կարող հավակնել ճանաչվելու որպես հանգուցյալի ժառանգ»:

Երեխաների նկատմամբ հասարակական խնամքը, որին Դատարանն անդրադարձել էր իր նախորդ բազմաթիվ վճիռներում, քննության է առնվել նաև մի շարք այլ գործերում^{clx}, որոնց մեջ մասնավորապես հետաքրքրություն է ներկայացնում *Սաբուն և Պիրսալաբն ընդդեմ Ռումինիայի (Sabou and Pircălab v. Romania)* գործը^{clxi}, որտեղ Դատարանը վճռեց, որ ազատազրկման դատապարտված լինելու հետևանքով ծնողական իրավունքներից ինքնաբերաբար զրկումը 8-րդ հոդվածի խախտում է առաջացնում:

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

Մեկ այլ գործ, որը հանձնվել է Մեծ Պալատին, *Բլեչիչն ընդդեմ Խորվաթիայի (Blecic v. Croatia)* գործն է^{clxii}: Դիմումատուի՝ հատուկ կերպով երաշխավորված բնակարանի վարձակալությունը վաղաժամկետ դադարեցվել էր ավելի քան վեց ամիս՝ առանց հիմնավոր պատճառի բացակայելու հիմքով, և նրա բնակարանը տրվել էր փախստականների մի ընտանիքի: Իրականում, դիմումատուն այցելել էր իր աղջկան Իտալիայում, և նրա բացակայությունը համընկնել էր տարածաշրջանում ծագած լուրջ ռազմական հակամարտության հետ: Դատարանն իր վճռում, գտավ, որ առկա է ինչպես Կոնվենցիայի 8-րդ հոդվածի, այնպես էլ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Պրոկոպովիչի (*Prokopovich*) գործը^{clxiii} վերաբերում էր, այս դեպքում, մահացած վարձակալի ամուսնու վտարմանը: Դատարանը 8-րդ հոդվածի խախտում արձանագրեց: Դատարանն ընդունեց, որ վիճարկվող բնակարանն ըստ էության դիմումատուի «տունն է» և գտավ, որ քանի որ պատշաճ ընթացակարգ չէր պահպանվել, միջամտությունը նրա բնակարանի հարգման իրավունքի իրականացմանը, չէր իրականացվել «օրենքով սահմանված կարգով»:

Մտքի, խղճի և կրոնի ազատության խնդիրը բարձրացվել է միայն հաշված թվով զանգատներում, որոնցից առավել նշանակալիցը *Լեյլա Շահինն ընդդեմ Թուրքիայի (Leyla Sahin v. Turkey)* գործն էր^{clxiv}, ևս մեկը, որը քննել է Մեծ Պալատը: Այն վերաբերում է Թուրքիայի համալսարաններում իսլամական գլխաշոր կրելու սահմանափակումներին, և հետևաբար անդրադառնում էր հարցերի, որոնք միևնույն ժամանակ հետաքրքրական էին այլ երկրների, օրինակ Ֆրանսիայի, համար, որը պետական դպրոցներում կրոնական հագուստները կրելու հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրություն էր ընդունել: Եզրակացնելով, որ 9-րդ հոդվածի խախտում առկա չէ, Մեծ Պալատը ընդունեց, որ «սեկուլարիզմ» հասկացությունը ... համապատասխանում է Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքներին» և որ «այդ սկզբունքի ընդունումը կարող է դիտվել որպես Թուրքիայում ժողովրդավարական համակարգի պաշտպանության համար անհարժեշտություն»^{clxv}:

Մուսուլմանական համայնքի բարձրագույն հոգևոր խորհուրդն ընդդեմ Բուլղարիայի (Supreme Holy Council of the Muslim Community v. Bulgaria) գործը^{clxvi} վերաբերում է նույն փաստական հանգամանքերին, ինչ որ առավել վաղ, ավելի կոնկրետ 2000 թվականին քննված *Հասանն ու Չաուշն ընդդեմ Բուլղարիայի (Hasan and Chaush v. Bulgaria)* գործը^{clxvii}: Խնդիրը մասնավորապես վերաբերում է մուսուլմանական համայնքի երկու մրցակցող առաջնորդ ուժերի միջև վեճին: Գործերը ներկայացվել էին Դատարան երկու անձանց կողմից կամ նրանց անունից, ովքեր հաջողությամբ ձանաչվել էին պետական իշխանությունների կողմից: Չնայած *Հասանի և Չաուշի (Hasan and Chaush)* գործում Դատարանը եզրակացրեց, որ միջամտությունը «օրենքով նախատեսված չէր», այն վերջերս քննած իր գործերում վճռեց, որ «համապատասխան օրենքը և պրակտիկան, ինչպես նաև 1997 թվականի Հոկտեմբերին իշխանությունների ծավալած գործողությունները արդեն

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

մասնատված համայնքի վրա ազդել են մեկ առաջնորդ ուժ ունեւալու առունով՝ մեկ կամ մի քանի մրցակցող առաջնորդ ուժերի կամքին հակառակ»: Հետևաբար կրոնական համայնքի գործերին միջամտությունը 9-րդ հողվածի խախտում է առաջացնում: 9-րդ հողվածին անդրադարձող այլ գանգատները ներառում են Դատարանի կողմից անընդունելի հայտարարված երկու գործեր, որից մեկում Դատարանը միացրել էր գանգատի ընդունելիության և ըստ էության որոշումները^{clxviii}, իսկ մյուսը վերաբերում էր Վրաստանում Եհովայի վկաների հավաքի վրա հարձակմանը^{clxix}:

10-րդ հողվածի հիման վրա ներկայացված գանգատները հիմնականում վերաբերում են գրպարտության դեպքերին, և 2004 թվականն այդ առունով բացառություն չի կազմում: Մասնավորապես Մեծ Պալատի վճիռներից երկուսը վերաբերում են արտահայտվելու ազատության և անձի հեղինակությունը պաշտպանելու իրավունքի միջև հավասարակշռությանը: Այս առունով, մասնավորապես, հետաքրքրություն էր ներկայացնում *Կամպանան և Մազարեն ընդդեմ Ռումինիայի*^{clxx} (*Cumpăna and Mazăre v. Romania*) գործով վճիռը: Այն վերաբերում է երկու հանրային գործիչների գրավոր խոսքի և ծաղրանկարների միջոցով գրպարտելու համար մի լրագրողի և խմբագրի քրեական քրեական պատասխանատվության ենթարկելուն: Արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը միջամտության հիմնավորման խնդրի էության վերաբերյալ, դատարանը գտավ, որ ներպետական դատարանները բավարար և համապատասխան հիմքեր են ներկայացրել կիրառված պատասխանատվության հիմնավորման համար, որը համապատասխանում էր «սոցիալական սուր պահանջին», քանի որ դիմումատուները լուրջ մեղադրանքներ են ներկայացրել, որոնց վերաբերյալ հետազայում դատական վարույթի ընթացքում չեն կարողացել բավարար փաստական հիմնավորումներ ներկայացնել: Չնայած դրան, Դատարանն անյուամենայնիվ գտավ, որ առկա է 10-րդ հողվածի խախտում, հաշվի առնելով կիրառված պատասխանատվության միջոցի ծանրությունը, մասնավորապես յոթ ամիս ժամկետով ազատազրկումը, որոշ քաղաքացիական իրավունքների ժամանակավոր սահմանափակումը և որպես լրագրող աշխատելու իրավունքից մեկ տարի ժամկետով զրկումը, գումարած հայցվորներին վնասների հատուցման վճարումը: Չնայած դիմումատուներն իրենց պատիժները չէին կրել Նախագահի կողմից ներում շնորհվելու պատճառով, և շարունակել էին աշխատել որպես լրագրող, Դատարանը հստակ նշեց, որ պատասխանատվության այդ երկու միջոցներն էլ լիովին անհամաչափ էին հետապնդվող՝ այլոց հեղինակությունը պաշտպանելու իրավաչափ նպատակին, հաշվի առնելով այն սուր ազդեցությունը որ նրանք կարող էին ունենալ մամուլի դերի վրա: Նույն օրը *Պեդերսենը և Բաադսգարդն ընդդեմ Դանիայի* (*Pedersen and Baadsgaard v. Denmark*) գործով կայացրած իր վճռում^{clxxi}, Մեծ Պալատը գտավ, որ 10-րդ հողվածի խախտում առկա չէ: Դիմումատուները հեռուստատեսային ծրագիր էին վարում, որտեղ ակնարկել էին որ գլխավոր սուպերինտենդանտը թաքցրել է մարդասպանության հետաքննության վարույթում եղած ապացույցները:

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

Ինչպես և Ռումինիային վերաբերող գործում, Դատարանը եզրակացրեց, որ մեղադրանքներն արվել էին առանց բավարար փաստական հիմքի առկայության: Այնուամենայնիվ, քանի որ կիրառված տուգանքները և փոխհատուցում վճարելու պարտականությունը ծանր չէին, դրանք չէին ունեցել այն նույն սուր ազդեցությունը, ինչ Ռումինիայի մասնակցությամբ գործում կիրառված պատասխանատվության միջոցները և դրանք հետևաբար համաչափ էին:

Ֆինլանդիայի դեմ բերված երկու գանգատներում, որոնք երկուսն էլ վերաբերում էին զրպարտության համար քրեական պատասխանատվությանը, Դատարանը եզրակացրեց, որ ներպետական դատարանների կողմից տրված հիմնավորումները բավարար չէին արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը միջամտությունը հիմնավորելու համար: Գանգատներից մեկը վերաբերում էր լրագրողի կողմից բժշկին զրպարտելուն^{clxxii}, իսկ մյուսը բարձրացնում էր ավելի շատ դասական մի խնդիր, այն է՝ լրագրողական ազատության և երրորդ անձի անձնական կյանքի գաղտնիության միջև հավասարակշռությունը^{clxxiii}: Վերջին գործով, դիմումատուները հողվածներ էին հրապարակել պառլամենտի անդամի ամուսնու վերաբերյալ՝ հասարակական կարգը խախտելու, հարբած լինելու և ոստիկանության ծառայողներին վիրավորելու հիմքով իրականացված դատավարության ու նրան նկատմամբ կիրառված պատասխանատվության մասին, իսկ ներպետական դատարանները լրագրողների նկատմամբ կիրառել էին մեծ տուգանքներ և պարտավորեցրել նրանց հատուցելու անձնական կյանքի գաղտնիությանը առանձնապես ծանրացնող հանգամանքներում պատճառված վնասները: Դատարանը նշեց, որ Պառլամենտի անդամների անձնական կյանքին միջամտության համար նախատեսված տույժերի և վնասների հատուցման ծավալների չափի, արտահայտվելու ազատության և անձնական կյանքի գաղտնիության պաշտպանության միջև առկա է լուրջ անհամաչափություն: Վերջին գործերից պարզ երևում է, որ արտահայտվելու ազատության իրավունքի իրականացման վերահսկմանն ուղղված պատասխանատվության ծանր միջոցների կիրառումը 10-րդ հոդվածով նախատեսված հավասարակշռության տեսանկյունից սովորաբար գնահատվում է անհամաչափ^{clxxiv}:

Զրպարտությանն առնչվող այլ գործերով, որոնք վերաբերում են դատախազին^{clxxv}, դատավորին^{clxxvi} և քաղաքացիական ծառայողին^{clxxvii} վիրավորելու համար լրագրողին պատասխանատվության ենթարկելուն, Դատարանը Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտում արձանագրեց: Դատարանը, նմանապես, վճռեց որ առկա է 10-րդ հոդվածի խախտում, այն գործերով, որոնք վերաբերում են թերթում հայտարարություն տպագրելու միջոցով մի մայրի վիրավորելու համար բնապահպանական կազմակերպության վրա վնասները հատուցելու պարտականություն դնելուն^{clxxviii}, լրագրողին տված հարցազրույցում Սահմանադրական դատարանի որոշումը քննադատելու համար փաստաբանին վարչական տուգանքի ենթարկելուն^{clxxix}, և Վճռաբեկ դատարանի դատավորին

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

քննադատող հոդվածների շարք հրապարակելու համար հրապարակագիր/խմբագրին պատասխանատվության ենթարկելուն^{clxxx}: Ֆրանսիայի դեմ բերված երկու զանգատներում, այնուամենայնիվ, դատարանը վճռեց, որ 10-րդ հոդվածի խախտում առկա չէ: Ֆրանսիայի Ռադիոն և այլոք ընդդեմ Ֆրանսիայի (*RadioFrance and Others v. France*) գործով վճռում^{clxxxii}, ռադիոլրագրողը և մի խմբագիր, պատասխանատվության էին ենթարկվել մասնուլում հրապարակված հոդվածի բովանդակությունն աղավաղող լրատվական նյութ պատրաստելու համար, որով մի նախկին բարձրաստիճան քաղաքացիական ծառայողի անունը կապվում էր Երկրորդ Համաշխարհային պատերազմում հրեաների արտահաման հետ: *Չաուվին և այլոք ընդդեմ Ֆրանսիայի* (*Chauvy and Others v. France*) գործում^{clxxxiii} հեղինակը, հրապարակող ընկերությունը և այդ ընկերության տնօրենը պատասխանատվության էին ենթարկվել Ֆրանսիայի Դիմադրության Շարժման անդամներին քննադատելու համար:

Ֆրանսիային վերաբերող երրորդ՝ *Էդիշընս Պլոնն ընդդեմ Ֆրանսիայի* (*Editions Plon v. France*)^{clxxxiii} գործով վճռում, Դատարանը պետք է որոշեր, թե արդյոք «*Le Grand Street*» գրքի տարածման նկատմամբ սահմանափակումները, որոնք սկսվեցին Նախագահ Միտերանի մահվանից անմիջապես հետո, ազատ արտահայտվելու իրավունքի իրականացման չհիմնավորված միջամտություն են հանդիսանում: Գիրքը նկարագրում էր թե ինչպես էր վերջին Նախագահը իր պաշտոնավարման առաջին իսկ ժամկետից սկսած տառապում քաղցկեղով, և անդրադառնում էր այն դժվարություններին, որոնք նրա բժշկներն ունենում էին Նախագահի հիվանդությունը հասարակությունից թաքցնելու համար: Դատարանն ընդունեց, որ առաջին ժամանակավոր սահմանափակումը կարող է հիմնավոր համարվել, հաշվի առնելով Նախագահի մահից հետո քաղաքական գործիչների և հասարակության մոտ եղած ուժեղ զգացմունքները, ինչպես նաև նրա հեղինակությանը հասցված վնասը և նրա ընտանիքի տառապանքի սրացումը: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է արգելքը անորոշ թողնելու վերաբերյալ վճռին, Դատարանը այն տեսակետն ընդունեց, որ այդ դիտարկումների արժեքը ժամանակի ընթացքում նվազել է և որ Նախագահի պաշտոնավարման երկու ժամկետների վերաբերյալ քննարկումները առավել գերակայող են հանրության շահերի տեսանկյունից, քանի թե իր իրավունքների պաշտպանությունը՝ բժշկական գաղտնիության առումով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդեն վաճառվել էր գրքի 40,000 օրինակ և որ այն հասանելի էր նաև *ինտերնետ* ցանցի միջոցով, Դատարանը եզրակացրեց, որ շարունակական արգելքը համաչափ չէ հետապնդվող «իրավաչափ նպատակին»:

Երեք վճիռներ վերաբերում են միավորումների կամ քաղաքական կուսակցությունների ազատության իրավունքին: *Գորզելիկը և այլոք ընդդեմ Լեհաստանի գործով* (*Gorzelik and Others v. Poland*) վճռում^{clxxxiv}, Մեծ Պալատը վճռեց, որ Սիլեզիայի «ազգային փոքրամասնության» կազմակերպությունը, որպես միավորում, գրանցելն մերժելը չի խախտում 11-րդ հոդվածը,

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

մասնավորապես հաշվի առնելով այն փաստը, որ նման ճանաչումը կնշանակի որ միավորումը արտոնություններ է ստանում ընտրական գործընթացում: Դատարանը նշեց. «Պետությունը դրանով չի սահմանափակել դիմումատուի միավորումների ազատության իրավունքը: Իշխանությունները նրանց չէին խոչընդոտել միավորում ստեղծել, որը կարտահայտեր ու կբարելավեր փոքրամասնության յուրահատուկ առանձնահատկությունները, այլ արգելել էին հիմնել իրավաբանական անձ, որը 1993 թվականի Ընտրական ակտով սահմանված կարգով կստանար հատուկ կարգավիճակ Միավորումների մասին օրենքի հիմքով վրա և միավորման ստեղծման մասին հուշագրում ինքն իրեն տված բնութագրության հիման վրա»: *Վաթանն ընդդեմ Ռուսաստանի (Vatan v. Russia)* գործով վճռում^{clxxxv}, Դատարանը ընդունեց Կառավարության նախնական առարկությունները և մերժեց գործը քննել ըստ էության, գտնելով, որ դիմումատու միավորումը չի կարող հավակնել ունենալու տուժողի կարգավիճակ մի տարածքային միավորման գործունեության կասեցման հիմքով, որը նրա պնդմամբ իր մասնաձյուղն է հանդիսանում: Վերջապես, *Մոլդովիայի նախագահական կուսակցությունն ընդդեմ Ռուսաստանի (Presidential Party of Moldova v. Russia)* գործով վճռում^{clxxxvi} Դատարանը գտավ, որ առկա է 11-րդ հոդվածի խախտում, այն հիմքով, որ դիմումատու միավորման, որպես քաղաքական կուսակցության, վերագրանցման մերժումը «նախատեսված չէր օրենքով»:

Միավորումների ազատության իրավունքին վերաբերող Մեծ Պալատի մեկ այլ վճիռ անդրադարձնում է դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն կիրառելուն, նրա՝ Ֆրիմասոններին անդամակցության հիմքով^{clxxxvii}: Դատարանը վճռեց, որ առկա է խախտում, քանի որ միջամտությունը «նախատեսված չէր օրենքով». «1990 թվականի մարտի 22-ի դեկրետի խմբագրությունը բավարար չափով պարզ չէր, որպեսզի հնարավորություն տար դիմումատուին, ով լինելով դատավոր առնվազն լավ տեղեկացված ու փորձառու էր իրավունքի ոլորտում, նույնիսկ 1982 թվականից հետո ծավալված բանավեճերի և զարգացումների լույսի ներքո, պատկերացնել, որ Մասոնական կազմակերպությանն իր անդամակցությունը կարող է իր նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու հիմք հանդիսանալ»:

Մի շարք հետաքրքրություն ներկայացնող գանգատներ բերվել են Կոնվենցիայի 14-րդ հոդվածի հիման վրա, որը արգելում է Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների իրականացման ընթացքում խտրականությունը՝ հոդվածում սահմանված հիմքերով: Այդ առումով, կարևոր իրադարձություն տեղի ունեցավ 2004 թվականին, Կոնվենցիայի Թիվ 12 Արձանագրության վավերացմամբ, որը սահմանում է խտրականության ընդհանուր արգելքները, և ուժի մեջ է մտնում 2005 թվականի ապրիլի 1-ին: *Նաչովան և այլոք (Nachova and Others)* գործով^{clxxxviii} խտրականության խնդրին վերաբերվող մասերին արդեն անդրադարձ է կատարվել 2-րդ հոդվածի ենթատեքստում: Այլ վճիռները, որտեղ ակնարկվում է խտրականության խնդիրը, վերաբերում են ավելի սովորական,

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

բայց ոչ պակաս կարևոր հարցերի: Պլան և Պունկերնաուն ընդդեմ Անդորրայի (*Pla and Puncernau v. Andorra*) գործով վճռում^{clxxxix}, խնդիրը կայանում էր ներպետական դատարանների կողմից 1999 թվականի կտակի մեկնաբանության մեջ: Կտակատուն սահմանել էր, որ իր ժառանգը պետք է փոխանցի իր թողած կտակը «պետական մարմիններում կամ եկեղեցում գրանցված անուսնությունից ծնված երեխային»: Ժառանգը այնուհետ կտակում է իր ժառանգած գույքը դիմումատուներից մեկին և իր որդեգրած որդուն, սակայն իր բարեկամներից ոմանք վիճարկում են դիմումատուի՝ իրական կտակի նկատմամբ ունեցած իրավունքը: Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցը, վճռելով, որ եթե կտակատուն չցանկանար որ որդեգրած երեխաները լինեին ցուցակում, ապա դրա մասին նա հատուկ նշում կկատարեր: Այնուամենայնիվ, Վերաքննիչ դատարանն այլ դիրքորոշում ընդունեց: Եվրոպական Դատարանը, հինգը ձայնով ընդդեմ երկուսի վճռեց, որ առկա է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում 8-րդ հոդվածի հետ միասին վերցրած: Դատարանը հիմնավորեց, որ կտակի բովանդակությունը թույլ չէր տալիս ենթադրելու, որ կտակատուն ցանկություն էր ունեցել կտակը ստացողների թվում չներառելու որդեգրած երեխաներին, և քանի որ նա դա չէր արել, տրամաբանական հետևությունն այն է, որ նա նման մտադրություն չի ունեցել: Ըստ Դատարանի, կտակի կապակցությամբ Վերաքննիչ դատարանի կողմից արված մեկնաբանությունը հակասում է իրավունքի ընդհանուր սկզբունքներին այն առումով, որ եթե դրույթը հստակ սահմանված է, ապա մտադրությանը անդրադառնալու անհրաժեշտություն չի առաջանում: Դատարանը չարձանագրեց ոչ մի օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում հարազատ և որդեգրված երեխաներին տարբերակելու համար, և ավելացրեց, որ եթե նույնիսկ ենթադրենք, որ վկաների ցուցմունքը մեկնաբանություն պահանջեր, այն չէր կարող կատարվել բացառապես 1939 թվականին գերակայող սոցիալական պայմանների լույսի ներքո, այլ մեկնաբանությունը կատարելիս պետք է հաշվի առնվեր նաև տեղի ունեցած սոցիալական, տնտեսական և իրավական խորը փոփոխությունները:

Իրավահաջորդության իրավունքների վերաբերյալ հարցն ընկած էր նաև *Մերժերը և Կրոսն ընդդեմ Ֆրանսիայի (Merger and Cros v. France)* գործի^{cxc} հիմքում: Գործը վերաբերում է արտամուսնական կապերից ծնված երեխայի օգտին սահմանված կտակի դրույթներն ու նրան տրված նվերները անվավեր ճանաչելուն: Դատարանը, հետևելով նախկինում իր կայացրած վճիռներին, սկսած *Մազուրեկն ընդդեմ Ֆրանսիայի (Mazurek v. France)* գործով վճռից^{cxc}, եզրակացրեց, որ ժառանգության իրավունքի մասով առկա է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համակցությամբ, այն նկատառումով, որ արտամուսնական կապերից ծնված երեխայի տարբերակումը հիմնավորված չէ: Ինչ վերաբերում է երեխային և նրա մորը մահացածի կենդանության օրոք տրված նվերներին, ապա Դատարանը վճռեց, որ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի չէ, քանի որ նվերների տրամադրումը հետադարձ ուժով չեղյալ է համարվել, բայց առկա է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

Խտրականությանը վերաբերող այլ կարևոր վճիռներն են *Ունալ Տեկելին ընդդեմ Թուրքիայի (Ünal Tekeli v. Turkey)* գործով վճիռը^{cxcii}, որտեղ Դատարանը խախտում արձանագրեց կապված ամուսնացած կնոջ վրա իր ամուսնու ազգանունը վերցնելու պարտականությունն ղնելու հետ, և *Ազիզին ընդդեմ Կիպրոսի (Aziz v. Cyprus)* գործով վճիռը, որը վերն արդեն քննարկվել է 3-րդ հոդվածի լույսի ներքո: Մի շարք վճիռներ վերաբերում են թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածին, և մասնավորապես ընտրվելու և ընտրելու իրավունքներին, որոնք այդ հոդվածի բաղկացուցիչ մասն են կազմում: Երկու գործեր վերաբերում են մարդկանց որոշակի խմբերի քվեարկելու իրավունքից զրկելուն: Հիրստն ընդդեմ Միացյալ Թագավորության (թիվ 2)^{cxci} (*Hirst v. the United Kingdom*) գործով վճռում Դատարանը գտավ, որ դատապարտված բանտարկյալների մի մասին ընտրելու իրավունքից զրկելը խախտում է քվեարկելու իրավունքը: Գործը հանձնվել է Մեծ Պալատին: *Ազիզն ընդդեմ Կիպրոսի (Aziz v. Cyprus)* գործով^{cxci}, դիմումատուն որպես թուրք-կիպրոսցիների համայնքի անդամ, չէր կարողացել մասնացել ընտրություններին, քանի որ Թուրքիայում գոյություն ունի թուրք-կիպրոսցիների ընտրական ցուցակ, իսկ իշխանությունները մերժել էին նրան այդ ցուցակում գրանցել: Դատարանը, նշելով, որ այս իրավիճակը բխում է նրանից, որ երկու համայնքների անդամների քվեարկելու իրավունքը կարգավորող սահմանադրական նորմերի կատարումը գործնականում դարձել է անհնար, վճռեց, որ առկա է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի և 14-րդ հոդվածի խախտումներ:

Մնացած գործերը ավելի շատ վերաբերում են ընտրություններում որպես թեկնածու գրանցվելու մերժմանը: *Ճանոկան ընդդեմ Լատվիայի (Ždanoka v. Latvia)* գործով^{cxv}, դիմումատուին, նախկինում Կոմունիստական կուսակցության անդամ լինելու պատճառով, թույլ չէր տրվել որպես թեկնածու մասնակցել պառլամենտական ընտրություններին: Դատարանը վճռեց, որ առկա է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի և 11-րդ հոդվածի խախտում: Գանգատը հանձնվել է Մեծ Պալատ: *Մելնիչենկոն ընդդեմ Ուկրաինայի (Melnychenko v. Ukraine)* գործը^{cxvi} վերաբերում է դիմումատուի՝ ընտրություններում որպես թեկնածու գրանցելը մերժելուն, այն հիմքով, որ նա կեղծ տվյալ է ներկայացրել, այն է՝ իր պաշտոնական գրանցման վայրը (պրոպիսկա) նշել է Ուկրաինան, չնայած իրականում ապրում էր արտասահմանում: Դատարանը այս գործում խախտում արձանագրեց:

Վերջապես, Դատարանը անընդունելի հայտարարեց երկու գանգատներ, որոնցում դիմումատուներին թույլ չէր տրվել նախագահական ընտրություններին մասնակցել որպես թեկնածուներ^{cxvii}: Դատարանը անդրադարձավ այդ երկրներում, այն է՝ Ադրբեջանում և Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետությունում Նախագահի դերի և հզորության հարցին, և եզրակացրեց, որ նրանց իրավասությունների շրջանակը թույլ չի տալիս նախագահի վարչակազմը թիվ 1 Արձանագրության

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

3-րդ հոդվածի իմաստով համարել «օրենսդրի» մաս, ինչը վերջին դեպքում կիրառելի չէ:

Սեփականության հետ կապված հարցեր (Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված)

Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի (*Broniowski v. Poland*) գործով կայացված իր վճռից^{cxviii} բացի, Մեծ Պալատը ընդունել է մի շարք այլ վճիռներ^{cxix}, որտեղ քննության առարկան սեփականության իրավունքի հետ կապված հարցեր են, չնայած որ դրանց մի մասում սեփականության հարցը երկրորդական է^{cc}: Այսպես, *Օներիլդիզի (Önerýldýz)* գործում^{cci}, որը հիմնականում վերաբերում էր դիմումատուի հարազատների մահվանը և այդ կապակցությամբ իրականացված հետաքննության արդյունավետությանը, Դատարանը նաև նրա տան և գույքի կորստի հիմքով Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում արձանագրեց: Այդ առումով, պետք է նշել, որ Դատարանը ընդունեց, որ դիմումատուն տան և դրանում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ուներ, չնայած որ այն անօրինականորեն կառուցված էր պետական սեփականության հանդիսացող հողի վրա:

Այս ոլորտում Մեծ Պալատի ընդունած մեկ այլ կարևոր վճիռը կայացվել է *Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի (Kopecký v. Slovakia)*^{ccii} գործով: Դիմումատուն պահանջում էր վերադարձնել 1959 թվականին իր հոր դատապարտումից հետո բռնագրավված ոսկյա և արծաթյա մետաղադրամները: Սակայն նրա պահանջը մերժվել էր այն հիմքով, որ նա չէր կարողացել ցույց տալ թե որտեղ են գտնվել այդ մետաղադրամներն այն ժամանակ, երբ ուժի մեջ էր մտել Արտադատական ռեաբիլիտացիայի մասին 1991 թվականի ակտը: 2003 թվականի հունվարի 7-ին կայացված իր վճռում Պալատը Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում արձանագրեց, հիմք ընդունելով այն, որ մետաղադրամների գտնվելու վայրը ցույց տալը դիմումատուի վրա անհամաչափ պահանջ է եղել: Այնուամենայնիվ, Մեծ Պալատը վճռեց, որ խախտում առկա չէ: Մեծ Պալատը վերահաստատեց սեփականության հարցերին վերաբերող այլ գործերում իր արտահայտած մոտեցումը, հետևյալ կերպ. «Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը չի կարող մեկնաբանվել այնպես, որ այն Մասնակից պետության վրա ընդհանուր պարտականություն է դնում սեփականությունը, որն իրեն է անցել մինչև իր կողմից Կոնվենցիայի վավերացումը, վերադարձնելու առումով: Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը նաև չի նախատեսում Մասնակից պետությունների ազատության որևէ սահմանափակում վերադարձման ենթակա սեփականության սահմանները որոշելու և այն պայմանների սահմանման հարցում, որոնցով նրանք պատրաստ են վերականգնել նախկին սեփականատերերի իրավունքները: ... Մասնավորապես, Մասնակից պետության հայեցողության սահմաններում է այդ իրավունքից սեփականատերերի որոշ խմբերին զրկելը: Այն սեփականատերերի փոխհատուցման պահանջները, ովքեր զրկվել են այդ

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

իրավունքից, չեն կարող «իրավաչափ սպասում» ունենալ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի պաշտպանության տակ ընկնելու առումով: Դատարանը անդրադարձավ «իրավաչափ սպասում» հասկացությանը վերաբերող իր նախկին վճիռներին և սահմանեց, որ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող «իրավաչափ սպասումի» առկայությունը որոշելու հարցում չի պահանջվում որպես չափանիշ դիտարկել «իրական վեճի» կամ «վիճելի պահանջի» գոյությունը: Մեծ Պալատը չհամաձայնեց Պալատի հիմնավորման հետ այդ առումով, առավելապես ընդունելով այն մոտեցումը, որ «եթե պահանջի հիմքը սեփականության իրավունքն է, ապա այն կարող է համարվել «գույք» միայն եթե ներպետական օրենսդրությունում առկա է բավարար հիմք, օրինակ, եթե առկա է դա հաստատող ներպետական դատական պրակտիկա»: Չնայած որ մետաղադրամները հետ վեադարձնելու մասին Դիմումատուի բողոքը ի սկզբանե պայմանական է եղել, և որ ներպետական ընթացակարգերում դատարանները որոշել են, որ դիմումատուն չի գործել օրենքի պահանջներին համապատասխան, Դատարանը որոշեց, որ գանգատը «բավարար չափով հիմնավորված չէր, այն որպես «սեփականություն» որակելու և հետևաբար թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի պաշտպանության տակ ընկնելու համար»:

Ուստիստուցիային են վերաբերում նաև գործերի մի խումբ, որոնց դատարանն անդրադարձավ 2004 թվականին կայացրած իր մեկ վճռով՝ *Յանը և այլոք ընդդեմ Գերմանիայի (Jahn and Others v. Germany)*^{cciii}: Գանգատը հետազայում հանձնվել է Մեծ Պալատին և ներկայումս նրա վարույթում է գտնվում: Պալատը վճռեց, որ առկա է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում, նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում հողային ռեֆորմի հետևանքով ձեռք բերված հողամասերն, առանց հատուցման հարկային մարմիններին փոխանցելու պարտականության առկայության հիմքով: Ինչպես և վերը նշված *Բրոնիովսկիի (Broniowski)* գործի դեպքում, այս դեպքում նույնպես գործը կիրառելի է մեծ թվով մարդկանց նկատմամբ:

Վերն արդեն անդրադարձ է կատարվել 6-րդ հոդվածի կոնստեքստում սեփականության իրավունքների վրա դատարանի վերջնական վճիռների վերացման կամ երկարատև չկատարման ազդեցությանը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ *Բրումնչեսկուի (Brumărescu)* գործին նման գործերի թիվը շեշտակիորեն անկում է ապրում, նման խնդիր ծագել է *Անդրոնեն ընդդեմ Ռումինիայի (Androne v. Romania)* գործում^{cciv}: Ավելին, վարույթը վերսկսելուն վերաբերող մի գործում, 6-րդ հոդվածի կապակցությամբ բողոք չէր ներկայացվել, բայց դատարանը թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում արձանագրեց^{ccv}: Դատական ակտի չկատարմանը վերաբերող մի գործում նմանապես արձանագրվեց միայն թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում^{ccvi}:

Մի շարք վճիռներ վերաբերվում են սոցիալական վճարների ու թոշակի իրավունքին: *Կյարտան Ասմունդսոն ընդդեմ Իսլանդիայի (Kjartan Ásmundsson v. Iceland)* գործով^{ccvii} վճռում, Դատարանը գտավ, որ դիմումատուի վրա

2004 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

անձնական և անհամաչափ ծանրություն է դրվել, նրա հաշմանդամության թոշակի չափը կրճատվել է այդ արտոնության պայմանների փոփոխման հետևանքով, չնայած որ հաշմանդամության կարգը նույնն էր մնացել: Իսկ *Պրավեդնայան ընդդեմ Ռուսաստանի (Pravednaya v. Russia)* գործում^{ccviii} Դատարանը նմանապես վճռեց, որ դիմումատուի թոշակի կրճատումը նոր երևան եկած հանգամանքների ուժով, որոնք դատարանը գնահատեց որպես նախապես հայտնի, դատարանի վճռի վերանայման հետևանքով, խախտել են հակադրվող շահերի միջև արդարացի հավասարակշռությունը:

